«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վաննաև բնակավայրի վարչական տարածքում թիվ 2 հողամաս հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման ՇՄԱԳ հաշվետվություն:

լրամշակված

«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ տնօրեն Հարություն Ավագյանի
լիազորված անձ Վարդան Դաղայան

Բովանդակություն

1.Ընդհանուր տեղեկատվություն....4

2. Հավելվածներ....4

3. Օգտագործվող հապավումները....4

4.Նախնական գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը....5

5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ....8

6.Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը և գործունեության իրականացման նպատակը....10

7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման հիմքերը....10

8.Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը....10

8.1. Ենթակա տարածք....11

8.2.Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը....17

8. 2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը....17

8.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն....18

8.2.3 Կլիմա և օդային ավազան....19

8.2.4. Հողային ռեսուրսներ....23

8.2.5 Ջրային ռեսուրսներ....25

8.2.6. Կենսաբազմազություն....27

8.2.7 Պատմության և մշակութային հուշարձաններ....31

8.2.8 Բնության հուշարձաններ....32

8.2.9. Հատուկ պահպանվող տարածքներ....34

8.2.10. Սոցիալ-տնտեսական....34

9. Նախատեսվող գործունեության բնութագիրը, հզորությունները, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր(շինարարության և շահագործման, փակման փուլեր)....37

9.1. Շինարարության փուլ....38

9.1.1 Շինհրապարակ....38

9.1.2. Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը....42

9.1.3 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր....47

9.2. Շահագործման փուլ....48

10. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, մարդու առողջություն(շինարարության և շահագործման փուլեր)....51

10.1 Օդային ավազան....52

10.2 Հողային ռեսուրսներ....53

10.3 Ջրային ռեսուրսներ....54

10.4 Կենսաբազմազանություն....54

10.5 Թափոններ....55

10.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ....56

10.7 Աղմուկ և թրթռում....58

10.8 Էլեկտրական և մագնիսական դաշտ....59

10.9 Արտակարգ իրավիճակներ. 59
10.10 Մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն. 59
10.11 Սոցիալական գործոններ. 60
10.12 Լանդշաֆտ և Բարեկարգում. 61
11.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը (Բնապահպանական կառավարման պլան). 61
11.1 Օդային ավազան. 62
11.2. Հողային ռեսուրսներ. 62
11.3 Ջրային ռեսուրսներ. 63
11.4 Կենսաբազմազանություն. 64
11.5.Թափոններ. 65
11.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ. 66
11.7 Աղմուկ և թրթռում. 66
11.8 Արտակարգ իրավիճակներ. 67
11.9 Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն. 68
11.10 Սոցիալական գործոններ. 69
11.11 Լանդշաֆտ, բարեկարգում. 70
12. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը 70
13. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան. 72
14. Մոնիթորիգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր). 91
15. Հանրային քննարկումներ 94
16.Բողոքների ընթացակարգ 94
17.Նախատեսվվող գործունեության իրականացման նպատակահարմարությունը, հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները. 95
18. Փակման փուլ. 96
Գրականություն 98

1.Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն	ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վաննաև բնակավայրի վարչական տարածքում թիվ 2 հողամաս հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում:
Նախաձեռնող	«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ
Նախաձեռնողի իրավաբանական հասցեն	ՀՀ Արմավիր, Վաղարշապատ 1101, Ա. Մանուկյան փ. /Տ/229
Նախաձեռնողի փաստացի գործունեության հասցեն՝	ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վաննաև բնակավայր 2 հողամաս
Նախաձեռնողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	Harutyun.avagyan90@mail.ru
Գնահատման հաշվետվության նախագծող	«Նովալ»ՍՊԸ
Հաշվետվության մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 noval.llc.noval@gmail.com

2. Հավելվածներ

Հավելված 1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների Պետական գրանցման վկայականը, Պետական ռեգիստրը

Հավելված 2.Ճարտարապետահատակագծային առաջադրանքը

Հավելված 3. «ՀԷՑ»-ի տեխնիկական պայմանը

Հավելված 4. Էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիան:

Հավելված 5. Արևակայանի հատակագիծը՝ WGS կոորդինատներով:

Հավելված 6. Օդային գծի ուղեգիծը, կոորդինատները:

Հավելված 7. Տարածքի հնագիտական և պատմամշակութային հուշարձանների վրա ազդեցության գնահատման եզրակացություն:

Հավելված 8. Մթնոլորտային օդի հաշվարկներ

Հավելված 9. Գործունեության ենթակա տրածքի հողի անալիզի արդյունքները

Հավելված 10. Վարդենիս համայնքի ավագանու որոշումը

Հավելված 11. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ, լսման լուսանկարներ

Հավելված 12.Թերթի հայտարարությունը

Հավելված 13.Վճարման անդորրագիր

3. Օգտագործվող հապավումները

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատում
ՕԳ՝ օդային գիծ
ՀԷՑ՝ Հայաստանի էլեկտրական ցանցեր
Վտ՝ Վատտ
ՖՎ՝ ֆոտովոլտային
ՍՊԸ՝սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
կՎտ՝ կիլովատտ
ԿՎԱ՝ կիլովոլտ-ամպեր
ՄՎտԺ՝ մեգավատտ ժամ

4.Նախնական գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք- Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121-Ն (ընդունված 19994թ. և խմբագրված 07.12.2022թ.)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)–Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) -Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպաիրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն

ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն։

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)-Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը։ Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից։

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը։

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է։

«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք(2004թ.)– Կարգավորում է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնելիս, մասնավորապես, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական (ազգային, նպատակային) ծրագրերի մշակումը, ընդունումը և իրականացումը, էներգակիրների արդյունավետ օգտագործման ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, ՀՀ տնտեսության զարգացման պետական ծրագրերում, համայնքների զարգացման քառամյա ծրագրերում, ինչպես նաև 50 և ավելի տոկոս պետական բաժնեմասով ընկերությունների զարգացման ծրագրերում էներգախնայողության պահանջների ընդգրկումը, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակման ու կիրառման ապահովումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, էներգախնայողության ծրագրերում և վերականգնվող էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցությանն աջակցումը։

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք (Ընդունված է 2001 թվականի մարտի 7-ին)- Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, սույն օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն

իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

ՀՀ կառավարության որոշումներ

- **ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թ.** «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-Ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ**. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ.** «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014թ.** ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ**. «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 02 նոյեմբերի 2017 թ.** «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 18 մայիսի 2000 թվականի** 1000 Վոլտ և բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնները հաստատելու մասին N 249 որոշում:
- **ՀՀ կառավարության 21 ապրիլի 2023 թվականի «**Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 583-Ն որոշում:
- **ՀՀ կառավարության 13 ապրիլի 2023 թվականի** «ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ԳԾԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 523-Ն որոշում:

5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի Էներգետիկայի բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «արևային էլեկտրակայաններ՝ 3 հա և ավելի տարածք զբաղեցնող»: Նախատեսվող արևային ֆոտովոլտային կայանը զբաղեցնում է 6,5 հա տարածք:

Գնահատման հաշվետվության բովանդակությունը կազմվել է Օրենքի 15-րդ հոդվածի Բ կատեգորիայի նախատեսվող գործունեության՝ ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներին համապատասխան.

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան.

3) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը, ինչպես նաև դրանց օգտագործման նպատակը, ենթակառուցվածքները, ազդակիր համայնքը և դրանց տեղադիրքն արտացոլող իրավասու մարմնի տրամադրած տարածական պլանավորման փաստաթղթերը, իրադրության սխեման կամ քարտեզը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող միասնական գեոդեզիական կոորդինատային համակարգով.

4) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության, շահագործման, փակման և հետփակման փուլերում (արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

5) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում.

6) մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

7) նախագծային փաստաթղթով նախատեսված բնապահպանական կառավարման պլանը.

8) հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.

9) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացումը՝ նախագծային փաստաթղթին համապատասխան, բացահայտել գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված միջոցառումները:

Հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

6.Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը և գործունեության իրականացման նպատակը

Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցումը իրականացվելու է «Սոլար Սթար Իքս» ՍՊԸ-ի կողմից՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի գ. Վանևան 2 հողամասում՝ սեփականության իրավունքով պատկանող հողամասում: Նախաձեռնողի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ Արմավիր, Վաղարշապատ 1101, Ա. Մանուկյան փ. /Տ/229:

Տարածքի հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի,կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը էներգետիկայի:

Նախատեսվող արևային կայանի նպատակը ֆոտովոլտային արտադրական կայանի կառուցումն է՝ էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025թ.մարտի 26-ի, N 89-Ա որոշման համաձայն՝ «Սոլար Սթար Իքս» ՍՊ ընկերությանը տրամադրվել է 5000 կՎտ տեղակայվող հզորությամբ ԼԷ №0708 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա՝ մինչև 2047թ.մարտի 27-ը գործողության ժամկետով: «Սոլար Սթար Իքս» ՍՊ ընկերությունը դիտարկում է արևային էլեկտրակայանի արտադրած էներգիայի վաճառքը երկարաժամկետ ժամանակահատվածում: Այն էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա:

7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման հիմքերը

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կազմման համար հիմք է հանդիսացել.

- Գործունեության իրականացման նախագծային փաստաթուղթը:
- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման վկայականը՝ N 25022025-05-0082: Հավելված 1.
- Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ ՈՆԹ-3602-25, տրված՝ 05.06.2025թ:
- «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրամադրված տեխ. պայմանը՝ S-110/0163/1-Հ, 05.06. 2025թ.:
- Գործունեության իրականացման Լիցենզիան՝ ԼԷ N0807:

8.Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը

8.1. Ենթակա տարածք. Արևային կայանը տեղակայված է լինելու «Սոլար Սթար Իքս»ՍՊ Ը-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վաննաև գյուղի վարչական տարածքում՝ 6.5 հա տարածքի վրա: Տարածքն իրենից ներկայացնում է Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային ստորոտներում՝ Մասրիկ գետի ձախ ափի երկայնքով տարածվող մի հատված, որն ունի հիմնականում հարթ՝ ոչ բարձր բլուրների առկայությամբ կտրատված ռելիեֆ: Տարածքում բացակայում են ծառերը, ծառաթփերը, քարքարոտ է, տեղ-տեղ ծածկված տարախոտային բուսականությամբ: Նախկինում՝ տարածքն օգտագործվել է որպես արոտավայր:

Հողամասին կից՝ մոտ 800մ հեռավորության վրա գտնվում են էլեկտրամատակարարման համակարգեր՝ «ՀԷՑ»ՓԲԸ-ին պատկաղող օդային գծեր, հարակից տարածքներում՝ մոտ 10մ հեռավորության վրա գտնվում են արոտավայրեր, վարելահող:

Արևային կայանի տեղաբաշխման վայրն ընտրված է տեղական ինքնակառավարման մարմինների և նախաձեռնողի համաձայնությամբ, հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները:

Գլոբալ հորիզոնական ճառագայթումը Հայաստանի Հանրապետությունում:







«ՍՈՒԼՈՒ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ				5.000 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղաբաշխում ՀՀ, Մարզ Գեղարքունիք, համայնք Վարդենիս գյուղ Վանեվան 2 հողամաս			
	Անուն		Թվակ.	Շինարարական մաս	Վերանայում	Մասշտաբ	Թերթ	Թերթեր
ՆԳԻ	Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ				01	-	02	21
Նախագծեց	Վ. ՉՕԼԱԳԵԼԱՆ			Ֆոտովոլտային կայանի տեղակայման վայրը	ecoVille energy Powered by Sun			
Նախագծեց	Ա. ԴՈՒԼԳՈՎԱ							



«ՍՈՒԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ				5.000 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղաբաշխում ՀՀ, Մարզ Գեղարքունիք, համայնք Վարդենիս գյուղ Վանեվան 2 հողամաս				
	Անուն		Թվակ.	Շինարարական մաս	Վերանայում	Մասշտաբ	Թերթ	Թերթեր
ՆԳԻ	Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ				01	1:10000	03	21
Նախագծեց	Կ. ՉՕԼԱԳԵԼՅԱՆ			Իրավիճակային հատակագիծ				
Նախագծեց	Ա. ԴՈՒԼԳՈՎԱ							

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ արևակայանի, ենթակայանի հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների։ Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը էներգետիկայի։

Արևային ֆոտովոլտային արևակայանի իրադրության քարտեզ-սխեման՝ըստ WGS կոորդինատային համակարգի

Հողամասին կից գտնվում են հանդամիջյան գրունտային ճանապարհ, մոտ 831մ հեռավորությամբ անցնում է միջպետական ավտոճանապարհ, 839մ հեռավորության վրա տեղակայված է ամենամոտ Վաննևան բնակավայրը, Սևանա լիճը գտնվում է 3858մ, Սևան ազգային պարկը 2793մ, ամենամոտ մակերևութային ջրահոսքը՝ 2986մ, մոտակա «Անանուն աղբյուր» երկրաբանական հուշարձանը՝ 4446մ հեռավորության վրա:

«Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ-ի կողմից 2025թ. մայիս ամսին կատարվել են գործունեության ենթակա տարածքի՝«Սոլար Սթար Իքս» ՍՊԸ պատկանող 2-րդ հողամասի համար երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրություններ, կատարվել է տարածքի և հարակից տարածքներին վերաբերվող տարբեր աղբյուրներում զետեղված, նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների հավաքագրում, կանոնակարգում, համադրում և վերլուծություն և հաշվետվության կազմում:



Տեղադիտական հետազննություններով վեր են հանվել վտանգավոր երկրաբանական երևույթները և պրոցեսները՝սողանք, քարաթափում-ճահճացում և այլ: Կատարվել են կառուցվածքի գրունտների փորձանմուշների լաբորատոր ուսումնասիրություններ, փորվել են 8 հատ հորատանցքեր՝ յուրաքանչյուրը 2գծ/մ խորությամբ, որի արդյունքում կատարվել են հանված գրունտի նմուշարկում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելյան մասում, Գեղարքունիքի մարզում՝ Վարդենիս քաղաքից մոտ 3 կմ արևմուտք, Մարտունի-Վարդենիս ճանապարհի ձախ կողմում, ծովի մակարդակից մոտ 1950 մ բարձրության վր: Ուսումնասիրվող տարածքը առանձնանում է ռելիեֆի բազմազանությամբ և մասնատվածությամբ: Տարածքի կառուցվածքա-դենուդացիոն ռելիեֆը ստեղծվել է ծալքավոր հիմքի վրա, տեղ-տեղ բարդացված տեկտոնական խախտումներով:

Տարածքի կառուցվածքում հիմնականում մասնակցում են նստվածքային և հրաբխանստվածքային ապարները: Նստվածքային ապարները ներկայացված են ռելիեֆի զրահապատված ձևերում, իսկ ռելիեֆի հարթեցված ձևերը պայմանավորված են հրաբխանստվածքային ապարներով:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են տարատեսակ հրաբխանստվածքային, հրաբխային և նստվածքային ապարներ, որոնք հաճախ ծածկվում են ծածկոցի տեսքով չորրորդականի ջրաբերներով և փխրունաբեկորային առաջացումներով:

Կլիման. ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրվում են ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01-2024թ. «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթին համապատասխան: Տարածքը գտնվում է ցուրտ կլիմայական գոտում, բնորոշվում է խիս ցուրտ ձնեռով և զով ամառով: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 30°C է, բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝-29°C: Քամու միջին տարեկան արագությունը 3.1մ/վ: Բնահողի սառչելու առավելագույն խորությունը՝ 75սմ:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերի ձևավավորումն ու բնույթն ուղղակիորեն կախված է տարածքի ֆիզիկա-աշխարհագրական պայմաններից և երկրաբանա-լիթոլոգիական առանձնահատկություններից: Ելնելով դրանից, հետազոտվող տարածքը կարելի է գնահատել, որպես գրունտային ջրերի սնման, կուտակման և

բեռնաթափման շրջան: Տեղամասում մինչև 2.0մ փորված հոտատանցքներում գրունտային ջրեր չեն բացահայտվել և ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 5մ-ից խորը հորիզոններում:Ստորերկրյա ջրերը բեռնաթափվում են Սևանա լճի մեջ:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները._Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի տարածքը գտնվում II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ:

Տարածքի ինժեներա–երկրաբանական կառուցվածքը. ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երկու շերտ, ելնելով շերտերի լիթոլոգիական նկարագրություններից և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկություններից:

Շերտ 1.Հողաբուսական շերտ, գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (9ա) I կարգ է , 0,2մ:

Շերտ. 2 Տարբեր ապարների մանրախճա-մանրաբեկորային նստվածքներ, 7-10 % բեկորանյութով, 20-25% շագանակագույն ավազակավային լցանյութով: Լցանյութը պինդ է, մանրամիջահատիկ է և հոծ: Դրանք ժանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ նստվածքներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՍՆԻՊ-IV-2-84-ի (13) IV կարգ է:

Տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ կատարելու համար, որպես հիմնատակ ծառայում է.

- շերտ 2-ը (Տարբեր ապարների մանրախճա-մանրաբեկորային նստվածքներ), որոնք սեյսմիկ հատկությամբ ըստ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ կարգ են:
- Հաշվարկային դիմադրություն- 4.5 կգ/սմ^2
- Ընկրկելիության գործակից, 5000 տ/մ^3

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են բնության, պատմամշակութային հուշարձաններ, գրունտային ջրերը և քաղցրահամ ջրի աղբյուրները:

Գործունեության ենթակա և հարակից տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված բուսական և կենդանական տեսակները բացակայում են, քանի որ տարածքն արդեն ենթարկվել է մարդածին ազդեցությանը, երկար տարիներ տարածքն օգտագործվել է որպես արոտավայր:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ենթակառուցվածքների փոփոխություններ չեն կատարվելու, նոր ճանապարհներ չեն կառուցվելու: Գործունեության ենթակա տարածք հնարավոր է մոտենալ գոյություն ունեցող գրունտային ճանապարհով:

8.2.Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը

8. 2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Վարդենիս խոշորացված համայնքի Վաննաև բնակավայրի վարչական տարածքում: Մարզը սահմանակից է Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից սահմանակից է Ադրբեջանին:

Գեղարքունիքի մարզը հիմնականում զբաղեցնում է Սևանա լճի ջրհավաք ավազանը: Մարզի գլխավոր լեռնաշղթաներն են՝ Գեղամա, Արեգունի, Սևանի Արևելյան Սևանի, Վարդենիսի, որտեղ առկա են տասնյակ հրաբխային կոներ՝ հատկապես ուշագրավ են Աժդահակ և Արմաղան հրաբուխները: Լեռների ձագարաձև խառնարաններում գոյացել են գեղեցիկ լճակներ: Արեգունու և Սևանի լեռնաշղթաների Գեղարքունիքի մարզի սահմաններում գտնվող լանջերը զառիթափ են ու կտրտված, իսկ Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների դեպի Սևանա լիճ նայող լանջերը համեմատաբար մեղմաթեք են:

Տարածաշրջանի ռելիեֆ անհարթ է, թույլ բլրաշատ՝ ափսեաձև, աննշան կոնաձև իջվածքներով: Ռելիեֆի այսպիսի ձևերը օժանդակում են մթնոլորտային տեղումների արագորեն ներծծվելուն և մակերեսային հոսք համարյա չի ձևավորվում: Ջրի հատակից դուրս եկած առափնյա շերտը կազմված է ավազա-կավային և գելենչիկային նստվածքներից: Մակերևույթի ընդհանուր թեքությունը հարավ-արևելյան ուղղությամբ է: Սևանի ավազանի արևմտյան և հյուսիս-արևմտյան ափամերձ տարածքները բնորոշվում են ռելիեֆի տիպիկ հրաբխային կառուցվածքով: Հրաբխային լավաների հոսքահետքերը, հասնելով մինչև լճի ափամերձ տարածքները՝ առաջացրել են արևմտյան ափի բազմաթիվ ծովախորշեր, հրվանդաններ, երբեմն հզոր քարաբեկորների ձևով՝ ընդհուպ մինչև լիճը:

8.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն.

Մարզի ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները բավականաչափ բարդ են: Գրունտների առավելագույն արագացումները գրանցված են

Սևանա լճի հյուսիս-արևելյան և արևելյան ափերում: Տարածաշրջանը բնութագրվում է կտրուկ կտրտված բլրային ռելեֆով, խորը ձորակներով: Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի նորմերի՝ ըստ սեյսմիկ հատկության, ինչպես նաև 31.03.2021թ.Արտակարգ իրավիճակների նախարարի N 372-N հրամանի/ՀՀ տարածքի սեյսմիկ գոտևորման քարտեզ/՝ տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ:



8.2.3 Կլիմա և օդային ավազան.

Տարածաշրջանի կլիման չորային է: Ձմռանը գերիշխում է պարզ արևոտ թույլ սառնամանիքներով եղանակը, ձմռանը չափավոր ցուրտ է: Ամառը տաք է, չոր և անհողմ: Առավելագույն ջերմաստիճանն ամռանը հասնում է +30˚C, բացարձակ նվազագույնը ձմռանը՝ -29˚C: Տարեկան մթնոլորտային տեղումները կազմում են 639 մմ, հարաբերական խոնավությունը՝ 71%, քամու միջին տարեկան արագությունը կազմում է 2.3-5մ/վ: Գրունտի սառչման խորությունը կազմում է 75սմ: Գեղարքունիքի մարզը բնութագրվում է շատ առատ արևափայլով, արևային օրերի քանակը կազմում է 300 օր և ավելի:

Գործունեության տարածքի կլիմայական պայմանները ներկայացված են ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» Հայաստանի հանրապետության շինարարական նորմեր: Համաձայն նշված փաստաթղթի Ճամբարակի կլիմայական բնութագրերն են.

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ, ՁՄՌԱՆ ՍԿԻԶԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 **Օդի միջին ջերմաստիճան**

	Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C	
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
54.	Վարդենիս	-8.3	-6.8	-2.7	4.1	9.5	12.9	16.3	16.1	12.2	6.7	0.9	-5.1	4.7	-29	30	
34.	Մարդիկ	-8.5	-7.9	-3.1	4.2	9.4	12.9	16.2	16.0	12.5	6.7	0.6	-5.9	4.4	-38	34	

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 **Օդի հարաբերական խոնավությունը**

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
24.Մարդիկ	76	77	75	69	68	69	67	68	66	70	74	76	71	76	66	67	47

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 **Մթնոլորտային տեղումները**

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
54.Վարդենիս	43	53	62	69	88	65	47	36	28	48	47	53	639	258	381
	38	42	42	36	43	69	42	42	28	41	45	47	69		
34.Մասրիկ	19	19	27	37	62	65	43	35	29	43	31	22	432	118	314
	23	29	32	30	44	48	54	72	36	40	35	18	72		

Աղյուսակ 15 **Քամի** (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, % / Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների								Անդորրի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին վերլուծված մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
25.Մասրիկ	հունվար	3	3	57	3	7	6	19	2	55	2.3	Արլ	6.4	Արմ	5.2
		2.2	2.6	3.0	3.4	5.0	4.6	5.2	3.5						
	ապրիլ	3	2	43	3	8	6	32	3	64	3.0				
		3.5	3.0	4.2	4.3	6.1	4.4	4.6	3.6						
	հուլիս	3	2	84	2	1	1	6	1	77	5.0				
		2.9	4.6	6.4	5.1	3.6	3.0	3.3	3.1						
	հոկտեմբեր	2	2	53	3	4	4	29	3	59	2.4				
		2.1	2.9	3.9	3.8	4.6	4.2	4.2	3.5						

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Օդային ավազան.

Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 45 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում՝ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Մթնոլորտային օդի որակի արդյունքերն ըստ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. եռամսյակային տեղեկագրերում՝ օդի որակի կատարված դիտարկումների վերաբերյալ տեղեկատվությունում Գեղարքունիքի մարզի բնակավայրերը ներկայացված չեն:

Նկար 6

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի **«Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումներ»-ի** բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների (հնգամյա միջին) մինչև 10 000 բնակիչ ունեցող բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Վաննաև բնակավայրը օդի աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ (SO2)՝ 0,006 մգ/մ³
- Ազոտի երկօքսիդ (NO2)՝ 0,023մգ/մ³
- Ածխածնի օքսիդ (CO)՝ 0.8 մգ/մ³

8.2.4. Հողային ռեսուրսներ.

Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, առկա են շատ որակյալ հողեր և նպատակահարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է՝ շուրջ 10000 հեկտար: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200մ բարձրություն: Տարածքը ներկայացած է միջին բարձրությամբ լեռնաշղթաներով, ուղիղ և ալիքաձև

թեքություններով և հարթություններով: Տարածքում գերիշխում են լեռնային սևահողերը, անտառային դարչնագույն հողերը: Մարզի հարավային և արևմտյան հատվածների հողային ծածկույթը հիմնականում ներկայացված է սևահողերով և գետահովտադարավանդային հողերով, իսկ հյուսիսային և հյուսիս-արևելյան հատվածները՝ մարգագետնատափաստանային, անտառային դարչնագույն և անտառային գորշ հողերով: Տարածաշրջանում լճային նստվածքների վրա ձևավորվել են գետահովտային, մարգագետնացած կոպճային և թույլ զարգացած ավազակոպճային հողագրունտների տիպերը: Ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրները:

Գործունեության իրականացման տարածաշրջանում գերիշխում են լեռնատափաստանային գորշ, կարբոնացված անտառային դարչնագույն հողերը, որոնք ձևավորվել են կարբոնատային, խճաքարային բերվածքների վրա:

Նկար 7

Համաձայն ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կաթիլային և անձրևացմամբ ոռոգման նորմերի մշակման ատլասի՝ Սևանի ավազանի գոտում առանձնացված է՝ երկու գոտի՝ Առաջին գոտու մեջ մտնում են Գեղարքունիքի մարզի մինչև 2000 մ բարձրությունների վրա տեղաբաշխված տարածքները: Հողածածկույթը կազմում են կարբոնատային և տիպիկ լեռնային սևահողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի միջին խտությունը տատանվում է 1,18-1,22գ/սմ^3 սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,63-2,70 գ/սմ^3 սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 54,8- 55,1 % սահմաններում: Ոռոգման երկրորդ գոտին ներառում է Գեղարքունիքի մարզի այն տարածքները, որոնք տեղաբաշխված են 2000 մ-ից ավելի բարձրությունների վրա: Այս գոտում հանդիպում են

կրազերծված սևահողերը և սևահողանման լեռնային մարգագետնատափաստանային հողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի խտությունը տատանվում է 1,17-1,21 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,52-2,59 գ/սմ³ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 53,2-53,6 % սահմաններում:

Մարզի խոշոր հիմնախնդիրներն են՝ հողերի դեգրադացումը, էռոզիան, ափամերձ գոտու անտառների ջրածածկումը: Մարզի հողային ծածկույթի էրոզիայի առավելագույն ցուցանիշները դիտարկվում են արևելյան և հյուսիսային հատվածներում:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Համաձայն՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. եռամսյակային տեղեկագրերում, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի հողային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

8.2.5 Ջրային ռեսուրսներ.

Սևանի ավազանում գետերի առավելագույն հոսքը հիմնականում նկատվում է գարնանը՝ վարարման ժամանակահատվածում(ապրիլ-մայիս ամիսներին): Գրեթե բոլոր գետերի առավելագույն հոսքերը ձևավորվում են արագ ձնհալի պատճառով, ինչպես նաև լրացվում են գարնանային հորդառատ անձրևներով: Սևանի ավազանի գետերը բաժանվում են 3 տեսակի՝ ըստ սնման աղբյուրների, մասնավորապես՝ Գեղամա արևելյան լանջերից և Վարդենիս լեռնաշղթայի հյուսիսային լանջերի մի մասից հոսք ստացող գետերը (Գավառագետ, Վարդաձոր, Լիճք, Ծակքար, Բախտակ, Կարճաղբյուր, ինչպես նաև Արգիճի գետի մի մասը, միջին և ստորին հոսքերում) սնուցվում են ստորերկրյա ջրերով: Տարածաշրջանի ամենամեծ մակերեսային ջրային ռեսուրսը Սևանա լիճն է: Սևանի ավազանի հիդրոերկրաբանական պայմանները բնորոշվում են երկրաբանա-կառուցվածքային, գեոմորֆոլոգիական և ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով: Սևանի ջրավազանային տարածքը ներառում է Զկնագետ, Մասրիկ, Սոթք գետերի գետավազանները, Վարդենիսի ու Գեղամա լեռներից սկսվող գետերը:

Գրունտային ջրեր.Տարածաշրջանում առանձնացվում են գրունտային ջրերի երեք հորիզոններ, որոնք միմյանցից առանձնացված են ջրամերժ կավային շերտերով:

Մարզում ստորգետնյա ջրերը հիմնականում կապված են վերին կավճի հասակի կրաքարերի և ուլտրահիմքային ու հիմքային ապարների կոնտակտի հետ, որոնք բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս երկրի մակերես, կրելով սեզոնային բնույթ: Շրջանում մթնոլորտային տեղումներից առաջացած ջրահոսքերը ներծծվելով ապարների ճեղքերով ու ծակոտիներով, սեզոնային բնույթի աղբյուրների և ժամանակավոր հոսքերի տեսքով բեռնաթափվում են Սևանա լիճ: Նախատեսվող գործունեության մոտակա տարածքներում

մակերևութային ջրային հոսքերը բացակայում են:

Վարդենիս գետ գտնվում է նախատեսվող գործունեությունից մոտ 3,5 կմ հեռավորության վրա, Սևանա լճի ավազան թափվող է: Սկիզբ է առնում Վարդենիսի լեռնաշղթայի կենտրոնական մասի հյուսիսային լանջերից՝ 3215 մ բարձրությունից: Երկարությունը 28 կմ է, ջրհավաք ավազանը՝ 116 կմ^2: Գետահովիտը վերին և միջին հոսանքներում V-աձև է, ստորինում լայնանալով՝ դուրս է գալիս մերձլճային հարթավայր և Վարդենիկ գյուղից հյուսիս թափվում Սևանա լիճը: Սնումը ձնաաևձրևային է, վարարումը՝ գարնանը: Տարեկան միջին ծախսը 1,87 մ^3/վ է, հոսքը՝ 55, 8 միլիոն մ^3: Սելավատար է: Ձմռանը սառցակալում է: Ձրերն օգտագործվում են ոռոգման նպատակով[1][2]:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ դիտացանցերի միջոցով:

Մակերևութային ջրի որակի գնահատումն իրականացվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից համաձայն՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման: Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2025թ. 1-ին

եռամսյակի տեղեկագրի՝ Վարդենիս գետի ջրի որակը գետաբերանում հունվարին և փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս)։

8.2.6. Կենսաբազմազություն.

Հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքերը, նաև հրդեհները բացասաբար են ազդում հանրապետության բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա: Սևանա լճի և տարածքի կենսաբազմազանության պահպանման նպատակով ստեղծվել է «Սևան»ԱՊ-ը։

Տարածաշրջանը լեռնային է և բնորոշվում է լանդշաֆտների ուղղաձիգ գոտիականությամբ՝ ցածր և միջին լեռնաանտառային, մարգագետնա-տափաստանային, մերձալպյան, ալպյան: Բնական անտառները՝ գիհի և կաղնի ծառատեսակներով ոչ մեծ կղզյակներով տեղակայված են Արեգունյաց լեռնաշղթայի ուղղաձիգ լանջերի վրա, իսկ առանձին ծառեր և ծառերի փոքր խմբեր հանդիպում են նաև լճափի այլ հատվածներում:

Բուսական աշխարհ. Տափաստանային գոտին Հայաստանի տարածքի ամենաընդարձակ գոտին է, որը սկսվում է 1500-1600 մ-ից, երկրի հյուսիսային հատվածում հասնում է մինչև 2000 մ բարձրության, իսկ հարավային հատվածում՝ 2400-2500 մ: Գոտին

տափաստանային է և գորշ կարբոնատային, անտառային: Աչքի են ընկնում բուսական համակեցությունների բազմազանությամբ: Ծայրահեղ չորասեր, գուղձավոր, պնդաճիմ հացազգի խոտաբույսերի, փշաբարձիկավոր տարախոտերի առկայությունը բուսականության բնորոշ առանձնահատկություններից է:

Մարզի անտառ կազմող հիմնական ծառատեսակները հանդիսանում են սոճին, եղևնին, բարդին, ուռենին, թեղին, հացենին, ակացիան, փշատենին և այլ փշատերև ու սաղարթավոր ծառատեսակներ: Սևանա լճի ջրից ազատված հողագրունտները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի, չիչխան, բարդի և այլ):

Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատներն ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փռվող թփուտները՝ ցածրաճ գիհուտներ (Juniperus depressa) և այլն: Թփատեսակներից ամենամեծ մակերեսները զբաղեցնում է չիչխանը:

.Չիչխան

Տարածված են նաև արոսենու (արոսենի Կուզնեցովի (Sqrbus kuznetsqvii), արոսենի Հայաստանի (S.hajastana), արոսենի հունական (S.graeca)), մասրենու (Rqsa spinqsissima, R.canina), ասպիրակի (Spiraea crenata), ալոճենու (Crataegus qrientalis), ուռենու (Salix caprea) և այլ համակեցություններ:

Բնական բուսածածկույթին փոխարինվում են գալիս մշակաբույսերը՝ ցորեն, եգիպտացորեն, արևածաղիկ, պտղատու այգիները, իսկ ողողատներում՝ բանջարեղենի մշակությունը: (UNDP): Տարածաշրջանում կան անոթավոր բույսերի 1587 տեսակ, 32 ծառատեսակ, 102 թփերի տեսակ, 1146 բազմամյա խոտաբույս և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներ: Շուրջ 60 բուսատեսակներ համարվում են դեղաբույսեր և 100-ը՝ ուտելի են: Կան նաև 267 տեսակի սնկեր, որից 100 տեսակը ուտելի են և 24 տեսակը՝ թունավոր: Տեղանքում աճում են հացազգիներին պատկանող շատ բույսեր՝ շյուղախոտի (Festuca sp.), որոմի (Lolium sp.) 95.1 և դաշտավլուկների (Poa sp.) տարբեր տեսակներ:

Ռելիեֆային առանձնահատկությունների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ՝ հարուստ և բազմազան: Սևանի ջրհավաք ավազանի տափաստանային գոտին՝ 1906-2400մ ծովի մակերևույթից բարձր է, հիմնականում ներկայացված է չոր և տիպիկ տափաստաններին բնորոշ խոտաբույսերով՝ շյուղախոտ, փետրախոտ և այլն: Այստեղ աճում են նաև գիհու, մասրենու, արոսենու, կծուխորի, այծատերևուկի և այլ թփուտներ: Բավական շատ են գազերը, ոզնաթփերը, որոնց թվում կան մի շարք հազվագյուտ և անհետացող տեսակներ:

Սևան ազգային պարկի և պահպանական գոտու տարածքում գրանցված են մոտ 1.600 տեսակ բարձրակարգ բույսեր (Հայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից

ավելի) այդ թվում՝ 55 հազվագյուտ ու անհետացող, 23 էնդեմիկ, որոնք աճում են միայն Սևանի ավազանում: Դրանք են Լրձուն Սևանի, Ոզնաթուփ Գաբրիելյանի և այլն: Բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտա-հացազգային /Festuca valesiaca Gaudin, F. ovina L., Koeleria albovii Domin, K. cristata (L.) Pers., Bothriochloa ischaemum (I.) Keng, Stipa capillata L., S. Lessingiana Trin. Et Rupr., S. Tirsa Stev., Elytrigia trichophora (Link) Nevski, Galium verum L., տեսակներ Agropyron, Andropogon, Scabiosa, Veronica, Artemisia, Achillea, Astragalus/:

Կարմիր գրքում գրանցված են տարածաշրջանին բնորոշ՝ Խոզանափուշ Ֆյոդորովի-Cousinia fedorovii Takht, Լրջուն Սևանի-Isatis sevangensis N. Busch, Թրաշուշան հայաստանյան-Gladiolus hajastanicus Gabrielian, Հիրիկ Նրբագեղ - Iris elegantissima Sosn, Վիշապագլուխ ավստրիական - Dracocephalum austriacum L., Գառնառվույտ հայկական - Oxytropis armeniaca Sosn. ex Mulk.:

Վիշապագլուխ ավստրիական

Գառնառվույտ հայկական

Նախատեսվող արևային կայանի և ՕԳ-ի, ենթակայանի տարածքներում կարմիր գրքում գրանցված բուսատեսակները բացակայում են, տարածքը գտնվում է ակտիվ գործունեության գոտում, հարակից տարածքում առկա են արևակայաններ, ենթակառուցվածքներ:

Կենդանական աշխարհ. Կենդանական աշխարհը ներկայացված է ողնաշարավոր կենդանիների 330 տեսակներով՝ 44 տեսակ կաթնասուններ, որոնք պատկանում են հետևյալ կարգերին՝ գիշատիչներ(Carnivora), միջատակերներ(Insectivora), կրծողներ(Rodentia), չղջիկներ(Chiroptera), նապաստակներ (Logomorpha), սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (Artiodactyla): Տարածաշրջանում հանդիպում են գայլ, աղվես, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսա, ոչ հաճախ նաև արջ և այլն:

Համաձայն «Գեղարքունիք 1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի՝ մարզի տարածքում հաշվարկվում են 43 տեսակի փափկամարմիններ, 639 տեսակի հոդվածոտանիներ, որոնք պատկանում են միջատներին: Դրանցից 6-ը Հայաստանի էնդեմներ են: Կապտաթիթեռը (Maculinea nausithous Bergs), որն հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում: Տվյալ տարածքում հանդիպող Կարմիր գրքում գրանցված կենդանական տեսակներից են նաև ' Մարգագետնային մողես (Darevskia praticola),

Հայկական որոր (Larus armenicus), Գորշ ականջեղ չղջիկ(Plecotus auritus):

Սևանա լճի ձկները ներկայացված են սաղմոնազգի-Salmonidae, սիգազգի Coregonidae և ծածանազգի-Cyprinidae ընտանիքներով: Սաղմոնազգիներին են պատկանում Սևանի իշխանը (Sevan Trout-Salmo ischchan Kessler 1877) իր 4 էկոլոգիական ենթատեսակներով՝ Ամառային բախտակ (S. ischchan aestivalis), Ձմեռային բախտակ (S. ischchan ischchan), Գեղարքունի (S. ischchan gegarkuni), Բոջակ (S. ischchan danilewskii): Սիգազգիների ընտանիքի ներկայացուցիչը կլիմայավարժեցված սիգն է (Whitefish-Coregonus lavaretus): Ծածանազգի ձկնատեսակներին են պատկանում լճի երկու էնդեմիկները՝ Սևանի կողակը (Khrami carp Varicorhinus capoeta sevangi) և Սևանի բեղլուն (Sevan 17 barble-Barbus goktschaicus): 1980-ական թվականների սկզբից լճում սկսել է հանդիպել նաև արծաթափայլ լճածածանը (Crucian carp-Carassius auratus gibelio), որը պատահաբար լիճ է ներթափանցել արարատյան դաշտի ջրային համակարգերից:

Տարածաշրջանում հանդիպում են նաև 4 տեսակի երկկենցաղներ՝ Ցատկողներ (Salientia) կարգին պատկանող՝ Լճագորտ (Rana ridibunda), Փոքրասիական գորտ (Rana macrocnemis), Կանաչ դոդոշ (Bufo viridis), Շելկովնիկովի ծառագորտ (H.a.shelkovnikovi):

Սողուններից հանդիպում են՝ Սպիտակափոր ժայռային, Նաիրյան ժայռային, Ռոստոմբեկովի ժայռային, Հայկական ժայռային, Վալենտինի ժայռային մողեսները, իսկ օձերից՝ սովորականը, ջրային լորտուները, պոնձօձը, լեռնատափաստանային իժը: Երկկենցաղներից առկա են կանաչ դոդոշը, լճագորտը, փոքրասիական գորտը և շելկովնիկի ծառագորտը[11]:

Ջրային կամ ջրաճահճային կենդանիների համար որպես ապրելավայր ծառայում են Սևանա լճի ջրերը, ափամերձ գոտու ճահճուտներն ու լիճ թափվող գետերի գետաբերանները: Վերջին 4 տասնամյակի ընթացքում Սևանա լճի մակարդակի իջեցումը, ինչպես նաև ճահճուտների արհեստական չորացումը, նախկին ժայռոտ ափերի վերացումը խիստ բացասաբար են անդրադարձել ավազանի կենդանական աշխարհի վրա, որը հատկապես ցայտուն կերպով արտահայտված է թռչունների վրա:

Սևանի ավազանում հանդիպում էին 267 տեսակի թռչուններ՝ ձկնկուլ (Pelecaniformes) - 4 տեսակ, արագիլ, տառեղ, ջրցուլ (Ciconiiformes) -11 տեսակ, ֆլամինգո (Phoenicopteriformes) - 1 տեսակ, հոպոպ, սագեր, բադեր և այլն: Թռչուններից 48 տեսակը բնադրող են: Այսօր դրանցից շատերը՝ մոխրագույն սագը, տուրպան, կարմրակտուց և կարմրագլուխ բադերը, սպիտակագլուխ բադը (սավկան), չեն բնադրում լճի տարածքում: Էնդեմ հանդիսացող Սևանի ծովորորի համար բնական միջավայրը դարձել է էկոլոգիապես անկայուն: Պարկում մեծ պոպուլյացիաներով հանդիպում են՝ մեծ քնամուկը (Glis glis), պարսկական սկյուռը (Sciurus persicus), անտառային մուկը (Apodemus sylvaticus), այծյամը (Capreolus capreolus), լայնականջ ոզնին (Tadarida teniotis) և այլն:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված են՝ Կաթնասունների 6 տեսակ, (գործ արջը, ջրասամույրը, անտառային կատուն, բեզոարյան այծ-Capra aegagrus Erxleben և այլն), սողուններից 2 տեսակ(խայտաբղետ՝ Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ-Eremias arguta transcaucasica Darevsky, 1953) և փոքրասիական մողեսները- Darevskia rostombekovi Darevsky 1957), 39 թռչնատեսակներ (Հայկական որոր-Larus armenicus), վարդագույն հավալուսն - Pelecanus onocrotalus Linnaeus, ձկնկուլը և այլն), սագանմաններից՝ սպիտակագլուխ բադ կամ սավկա - Oxyura leucocephala Scopoli, ձկներից՝ Սևանի իշխանը իր տարատեսակներով, Սևանի բեղլուն (Barbus goctschaicus Kessler) և Սևանի կողակը (Varicorhinus capoeta sevangi, Filippi)

հոդվածոտանիներից՝ Արիոն կապտաթիթեռը - Maculinea arion zara Jachontov, Մթնշաղային կապտաթիթեռ - Maculinea nausithous, Անտեսված կապտաթիթեռ - Agrodiaetus neglectus Dantchenko, Նինայի կապտաթիթեռ - Agrodiaetus ninae Forster, Թուրքական կապտաթիթեռ - Agrodiaetus turcicus Koçak, գրանցված են միջազգային միության Կարմիր գրքում: առկա է նաև Մարգագետնային ծիծառակտցար-Glareola praticola հազվագյուտ տեսակը՝ բնադրման տեղային բնույթով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»* VU D1:

Հայկական որոր

Կապտաթիթեռ

8.2.7 Պատմության և մշակութային հուշարձաններ.

Տարածաշրջանում կան բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ: Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ սահմանվում է Վարդենիս քաղաքի և Վաննաև բնակավայրի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

4.5 ՎԱՐԴԵՆԻՍ քաղաք

1	2	3	4	5	6	7	8
1			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	15-20 դդ.	քաղաքի աե եզրին, Մեծ Մասրիկ տանող ավտոճանապարհի երկու կողմում	S	1: Ենթակայությամբ ներկայացված է 8 հուշարձան (1.1-1.8)
2			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԱԿՆԵՐ»	10-18 դդ.	քաղաքի աե մասում, Գարեջրի գործարանի մոտ	S	այլ անվանում՝ Սբ. Վարդան սրբատեղի (2)
3			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 7-5 դդ.	քաղաքի աե մասում	<	3

4			ԽԱՉՔԱՐ 1988 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻՆ	1989 թ.	քաղաքի հս-աե մասում	S	5
5			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1967 թ.	քաղաքի կենտր. հրապարակում	S	6
6			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1970-ական թթ.	քաղաքի մեջ, Արմե-նակ Կարապետյանի անվան զբոսայգում	S	7
7			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ	1978 թ.	քաղաքի կենտրոնում, մշակույթի տան մոտ	S	8
8			ՄԱՏՈՒՌ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ	15-16 դդ.	քաղաքի հս մասում՝ Ավան թաղամասում	S	9
9			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	16-18 դդ.	քաղաքից 0.2 կմ հվ-աե, ձորահովտի աե կողմում	S	10

4.83 ՎԱՆԵՎԱՆ գյուղ

1	2	3	4	5	6	7	8
1			ԽԱՉՔԱՐ	9-10 դդ.	գյուղի հս եզրին	Հ	1
2			ԽԱՉՔԱՐ	10 դ.	գյուղի հս մասում	Հ	2
3			ԽԱՉՔԱՐ	11 դ.	գյուղի հս եզրին	Հ	3
4			ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի հս եզրին	Հ	4

Գործունեության տարածքը չի առնչվում նշված պատմամշակութային հուշարձանների հետ։

8.2.8 Բնության հուշարձաններ

Գեղարքունիքի մարզը, ինչպես նաև Սևանի ավազանը հարուստ են բնական հուշարձաններով։ Մարզի տարածքում պահպանվել են բազմաթիվ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ, առանձնապես ուշագրավ բնական հուշարձաններ, խառնարանային լճեր, խարամային կոներ, ընդարձակ քարային ծովեր։

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման համաձայն՝ մարզում կան 15 բնության հուշարձաններ, որից 7-ը՝ երկրաբանական, 6-ը՝ ջրաերկրաբանական, 1-ը ջրագրական և 1-ը՝ կենսաբանական։ Բնական հուշարձանների մի մասն ունի հատուկ պահպանվող տարածքների կարգավիճակ։

	Երկարաբանական հուշարձաններ	
1	«Սկկատար» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ
2	«Աժդահակ» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
3	Անանուն» ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
4	«Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
5	«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
6	«Արմաղան» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մադինա գյուղից 3.5 կմ արմ
7	«Հայրավանք» բրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-ար
	Ջրաերկրաբանական հուշարձաններ	
1	«Սարանց» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
2	«Խաչերի» աղբյուր ծայրամասում	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում
3	«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
4	«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա
5	«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
6	«Վանքի աղբյուր» աղբյուրների խումբ	Գեղարքունիքի մարզ, Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա
	Ջրագրական հուշարձաններ	
1	«Արցունք քար» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
	Բնապատմական/կենսաբանական հուշարձաններ	
1	«Ենթալպյան մարգագետին»	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ

Գեղարքունիքի մարզ, Սևանի լեռնաշղթայի լանջերի (Շորժա գյուղի շրջակայքում) առկա են նաև «Օֆիոլիտային ապարների» մերկացումները, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N1718-Ն որոշմամբ հաստատված՝ Թառ (Կարմիր Կատար) հրաբուխ երկրաբանական հուշարձանը:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում չկան բնության հուշարձաններ:

Գործունեության տարածքին ամենամոտ հուշարձանը՝ «Անանուն աղբյուր» հուշարձանը գտնվում է 4446մ հեռավորության վրա:

8.2.9. Հատուկ պահպանվող տարածքներ.

Մարզի բնության հատուկ պահպանվող տարածք է «Սևան» ազգային պարկը՝ 147,343ազ. հա մակերեսով: Այն գտնվում է շրջակա միջավայրի նախարարության կառավարման ներքո՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործառույթների միջոցով: Այն Պարկի տարածքը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N 205-Ն որոշմամբ հաստատված «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի, բաժանվում է հետևյալ տարածքագործառնական գոտիների՝

1) արգելոցային՝ ընդգրկում է «Արտանիշի», «Նորաշենի», «Լիճք-Արգիչի» և «Գիլլի» արգելոցները.

2) արգելավայրային՝ ընդգրկում է «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայրերը.

3) ռեկրեացիոն.

4) տնտեսական:

«Սևան» ազգային Պարկը հանրապետական նշանակության՝ բնության հատուկ պահպանվող տարածք է: Պարկի հողերը հատուկ պահպանվող տարածքներ են, որոնք ներառում են բնապահպանական, պատմական ու մշակութային և այլ նշանակության հողեր: Վերջիններիս վրա օրենքով սահմանված կարգով արգելվում է պարկի նպատակային նշանակությանը հակասող գործունեություն: Այլ հողատերերի, հողօգտագործողների և հողամասերի սեփականատերերի հողերը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց շենքերն ու կառույցները, որոնք գտնվում են պարկի սահմաններում, օգտագործվում են իրենց նշանակությանը համապատասխան՝ այդ անձանց կողմից պահպանելով բնապահպանական նորմերը՝ սահմանված սույն կանոնադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Գործունեության տարածքը «Սևան»ԱՊ-ից գտնվում է մոտ 2793 մ հեռավորության վրա :

8.2.10. Սոցիալ-տնտեսական.

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վաննաև բնակավայրի վարչական տարածքում:

Համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի կայք էջի՝ Գեղարքունիքի մարզի տարածքը կազմում է 5351քառ.կմ, ներառում է 5 քաղաքներ և 93 գյուղական բնակավայրեր: Մարզի տարածքում է գտնվում Սևանա լիճը և «Սևան»ԱՊ-ը: Մարզկենտրոնը Գավառ քաղաքն է: 2024թ. տարեսկզբի դրությամբ մարզի բնակչությունը կազմում է 213,2հազ. մարդ:

Ներկայացվում է մարզի ներկա վիճակն ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի / /armstat.am/ կայք էջի:

Տարածքը Territory	5 351 քառ. կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	18.0
Համայնքներ, 2024թ. տարեսկզբի դրությամբ Communities, as of the beginning of 2024	5
Քաղաքներ Towns	5
Գյուղեր Villages	93
Բնակչության թվաքանակը 2024թ. տարեսկզբի դրությամբ Population number as of the beginning of the year, 2024	213.2 հազ. մարդ/ ths. person
այդ թվում՝ *including:*	
քաղաքային urban	67.6 հազ. մարդ/ ths. person
գյուղական rural	145.6 հազ. մարդ/ ths. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2023թ.,% Share of marz population in the total population of the Republic of Armenia 2023, %	7.1
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2023թ.,% Share of urban population size 2023, %	31.7
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	345 083.3 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	81 413.2 հա/ ha

Մարզում գյուղատնտեսական նշանակության հողատարածքները կազմում են 345 083.3հա, որից վարելահողերը՝ 81 413.2հա: Մարզում են գտնվում բազմաթիվ՝ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

2023թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 2.0 %,
- գյուղատնտեսություն 11.6 %,
- շինարարություն 4.6 %
- մանրածախ առևտուր 2.1 %
- ծառայություններ 0.8 %:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները: Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Մարզը հանդիսանում է ՀՀ-ում թարմ ձկան հիմնական մատակարարը: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզի տարածքով անցնում է Երևան-ՍևանԴիլիջան հանրապետական նշանակության մայրուղին:

Վարդենիս խոշորացված համայնք. Համաձայն Վարդենիս խոշորացված համայնքի 2022-2026թթ. հնգամյա զարգացման ծրագրի՝ համայնքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանա լճի հարավ-արևելյան կողմում և Վարդենիսի լեռնաշղթաների/Վարդենիս լեռն ունի ունի 3522 մ բարձրություն/ միջև՝ ծովի մակերևույթից 2006-2008մ բարձրության վրա: Գերակշռում է լեռնային մակերևույթը: Կլիման խիստ է, չափավոր ցուրտ-լեռնային երկարատև ձմեռով՝ գրեթե 6 ամիս: Տարածքում է գտնվում Մասրիկի դաշտը: Կան ոսկու,

շինանյութի, տորֆի հանքավայրեր: Տիրապետում են լեռնատափաստանային և լեռնամարգագետնային լանդշաֆտները: Տարածքով հոսում են Մասրիկ, Փամբակ, Դարա և այլ գետեր:

Համայնքը խոշորոցվել է 2021թ., իր կազմում ընդգրկել է 1 քաղաք՝ Վարդենիս և 36 գյուղական բնակավայրեր՝ Ազատ, Ախպրաձոր, Ակունք, Այրք, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամասար, Գեղաքար, Դարանակ, Զառիվեր, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կախակե, Կարճաղբյուր, Կութ, Կուտական, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Ներքին Շորժա, Նորաբակ, Նորակերտ, Շատջրեք, Շատվան, Ջաղացաձոր, Սոթք, Վանեվան, Վերին Շորժա, Տորֆավան, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ: Համայնքի վարչական տարածքը կազմում է 111.658հա: Համայնքում գործում են բանկեր, կենցաղային , էլեկտրատեխնիկայի, շինանյութի խանութներ, դեղատներ, ապահովված է բջջային կապով: Զարգացած է գյուղատնտեսությունը, ջերմոցային տնտեսությունները: Համայքում գործում են 34 հանրակրթական դրպոցներ՝ 3862 աշակերտներով, 10 մակապարտեզներ, 12 նախակրթարաններ, առողջապահական հաստատություններից գործում են Վարդենիսի քաղաքային հիվանդանոցը, պոլիկլինիկան, զինվորական հոսպիտալը: Համայնքը հիմնականում գազիֆիկացված է, առկա են գերեզմանոց, աղբավայր:

Համայնքի բնակավայրերը բարձր լեռնային են, հարուստ են պատմամշակութային հուշարձաններով՝ Վարդենիս սբ. Աստվածածին եկեղեցին, Մաքենյաց վանքը, Սոթքի բազիլիկ եկեղեցին, Վարդենիսի սբ, Աստվածածին եկեղեցին, Այրքի, կարճաղբյուրի մատուռները, դամբարանատաշտերը, Կիկլոպյան ամրոցները, խաչքարերը և այլն: Պատմամշակութային հուշարձանների առկայությունը համայնքի հեռանկարային զարգացման գրավականն է:

Համայնքի բնակչությունը զբաղվում է հիմնականում գյուղատնտեսությամբ, մասնավորապես խոշոր և մանր անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, ինչպես նաև հացահատիկի և կերային մշակաբույսերի մշակությամբ: որոնց արտադրանքը հիմնականում սպառվում է տեղում: Գործում են սննդի (կաթնամթերք, հացամթերք) ձեռնարկությունները: Տարածքում է գտնվում է Սոթքի հանքավայրը:

Վարդենիս քաղաքը ՀՀ հին բնակավայրերից է: Բնակավայրը գտնվել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի Սոթք գավառի կազմում: Հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 168կմ հեռավորության վրա: Բնակավայրի տարածքում է գտնվում բնակիչների համար կարևոր

նշանակություն ունեցող սբ. Վարդան սրբատեղին, սրբավայրի բխող ջրով: Առաջատար ճյուղն արդյունաբերությունն է: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը: 2024թ. տարեսկզբին Վարդենիս քաղաքի բնակչությունը կազմում է 12.6 հազ. մարդ:

Համայնքի հիմնախնդիրները կապված են առկա ենթակառուցվածքների վերանորոգման, մասնավորապես՝ճանապարհների, քաղաքային այգու հիմնանորոգման, ջրագծերի վերակառուցման, որոշ բնակավայրերի գազիֆիկացման գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և իրացման: Հիմնախնդիրներից կարևոր է աշխատատեղերի բացակայությունը, որը նպաստում է գործազրկության և արտագաղթի աճին: Գործազրկության աճը հանգեցրել է համայնքում որակյալ, ինչպես նաև նեղ մասնագիտական կազմի բացակայությանը, որը խանգարում է համայնքի տնտեսության զարգացմանը:

Վաննան բնակավայրը գտնվում է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում՝ Վարդենիս քաղաքից մոտ 3 կմ արևմուտք, Մարտունի-Վարդենիս ճանապարհի ձախ կողմում: Գտնվում է ծովի մակարդակից մոտ 1950 մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել վաղ միջնադարում: 1995 թվականից մտնում է ՀՀ Գեղարքունիքի մարզի մեջ:

Գյուղը բարձրադիր լեռնային է, լեռնային ցուրտ կլիմայով: Վաննան գյուղում ներառված է 4 պատմամշակութային հուշարձան: Վաննանում է գտնվում 10-րդ դարում կառուցված վանական համալիրը, քարանձավը, Հնեվանքը, սբ. Աստվածածին և սբ. Գրիգոր Լուսավորիչի եկեղեցիները, Բրուտի բերդ կիկլոպյան ամրոցը:

Գյուղն ունի արտաքին լուսավորության համակարգ: Բնակչությունը 2024թ. տարեսկզբի դրությամբ կազմում է 371 մարդ:

9. Նախատեսվող գործունեության բնութագիրը, հզորությունները, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր(շինարարության և շահագործման, փակման փուլեր).

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վաննան գյուղի վարչական տարածքի 2 հողամասում՝ 6.5 հա տարածքի վրա: Համաձայն նախագծի նախատեսվում է կառուցել «Սոլար Սթար-1» արևակայան՝ 5000կՎտ հզորության, 7000կՎԱ հզորության 110/0.8/0,8 կՎ լարման ենթակայան: Ըստ «ՀԷՑ»ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ նախատեսվում է

արևակայանը միացնել «Ոսկեհատ» 110կՎ օդային գծի մոտակա խարսխային հենարանին, կառուցելով մոտ 573մ երկարության 110կՎ լարման օդային գիծ։ Գործունեությունն իրականացվելու է ՀՀ կառավարության 21 ապրիլի 2023 թվականի «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 583-Ն որոշման պահանջներին համապատասխան:

9.1. Շինարարության փուլ.

9.1.1 Շինհրապարակ. Գործունեության իրականացման համար կազմակերպվելու շինհրապարակ, որն ամբողջ գործունեության տարածքն է:

Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ


Աշխատակազմի սենյակ
հանդերձարան
Պահակատուն
Զուգարան
Աղբի հավաքման կետ 1
Մուտք/ Ելք
Ավտոլվացում
Նյութերի պահեստավորման տարածք
Աղբի հավաքման կետ 2
Հողաթափման վայր
Լուսավորության հենարան (2-հատ)
ճանապարհ
Բիոզուգարան քանակ (1-հատ)
Պահակատուն քանակ (1-հատ)
Աշխատակազմի սենյակ (1-հատ)
Աղբի հավաքման կետ (2-հատ)
Ավտոլվացում (1-հատ)
Նյութերի պահեստավորման տարածք (1-հատ)
Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի աշխատանքային նախագիծ
Անուն
Ստորագ.
Թվակ.
Նախագծեց
Վ. ՉՕԼԱԳԵՄՆ
Հատակագիծ
Փուլ
Թերթ
Թերթեր
01
02
02
Իրավիճակային հատակագիծ
ecoVille energy
Powered by Sun

Շինհրապարակում տեղակայվելու է.

- աշխատալազմի սենյակ
- հանդերձարան
- պահակատուն՝ 1 հատ
- նյութերի պահեստավորման տարածք՝ 1 հատ
- բիոզուգարան՝ 1 հատ
- աղբի հավաքման կետ՝ 2 հատ
- հողի հավաքման վայր՝ 1 հատ
- մեքենաների անիվների լվացման հարթակ՝ 1 հատ, 8,0x3,5 մ չափերի։

Շինհրապարակն տեղադրվելու են երկու լուսավորության հենասյուններ։

Շինարարության ժամանակ աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, գրասենյակը, տեղադրվելու են ժամանակավոր վագոն տնակներում։

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում, որի համար նախատեսված է 1 հատ անիվների լվացման հարթակ՝ 8,0x3,5 մ չափերի։ Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ։ Շինհրապարակում մեքենաների անիվների լվացումից առաջացած հոսքաջրերն ուղղորդվելու են դեպի տարածքում տեղադրվող բիոզուգարան։ Իսկ շինարարական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 1 հատ համապատասխան տարողության պարզարան։ Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում։ Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ շինարարական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ։

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր 2մ բարձրության ցանկապատով։ Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները։

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը։

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ. Շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, որոնք լինելու են Կապալառու կազմակերպության սեփական միջոցները կամ վարձակալվելու են այլ կազմակերպություններից։ Օգտագործվելու են, մասնավորապես.

- հորատող-1հատ,
- հարթեցնող-1 հատ
- ինքնաթափ-1 հատ,
- ավտոաշտարակ-1 հատ,
- էքսկավատոր- 1 հատ և այլն։

Լուսավորություն և ջեռուցում. Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային

ժամերին։

Հողային ռեսուրսներ. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են հողային աշխատանքներ՝ կայանի կառուցման ժամանակ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի և դեպի ենթակայան տանող ստորգետնյա էլեկտրական գծի անցկացման նպատակով խրամուղիների փորման և լուսավորության հենասյունների տեղադրման, հողատարածքի ցանկապատման, ենթակայանում տրանսֆորմատորի տեղադրման, յուղընդունիչ հորի կառուցման հողային աշխատանքներ։ Տարածքում առկա է հողաբուսական շերտ ավազակավի, կավավազի լցոնումով՝ 0,2 մ հզորության։

Ենթակայանի և մալուխագծերի կառուցման ժամանակ, հողային գրունտի փորման արդյունքում հանվելու է մոտ 12մ^3 գրունտ, որից ենթակայանի կառուցումից՝ մոտ 10մ^3, մալուխագծի անցկացումից՝ մոտ 2 մ^3։ Հանված գրունտը՝ 11մ^3 և բուսահողը՝ 1մ^3 տեղում հարթեցվեու է։

Արևային կայանի հետ կապված գործողությունների արդյունքում հանվելու է մոտ 287մ^3 գրունտ, որից հանվող բուսահողի ծավալը կազմելու է 15.41մ^3։ Հանվող հողային զանգվածը կազմելու է 271.59մ^3 , որից 66մ^3 հողային զանգվածը կատարվելու է հետ լիցք, մնացած 205,59մ^3–ը կհեռացվի աղբավայր՝ համայնքի համաձայնությամբ։

Ընդամենը հանվելու է 282,59մ^3 հողային գրունտ, որից 77 մ^3 կատարվելու է հետ լիցք, մնացած 205,59մ^3-ը կհեռացվի աղբավայր՝ համայնքապետարանի կողմից հատկացված վայր։ Ընդամենը հանվելու է մոտ 16,41^3 ծավալի բուսահող, որն օգտագործվելու է տարածքի բարեկարգման համար։

Ջրային ռեսուրսներ. Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի։ Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի։ Տեխնիկական ջրի պայմանագիրը կկնքվի Կապալառու կազմակերպության կողմից՝ տեխնիկական ջրի մատակարարման լիցենզիա ունեցող ընկերության կամ անձի հետ՝ շինարարական աշխատանքների սկսվելու պահից։

Կեղտաջրերի հեռացում. Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող՝ 1 հատ շարժական 1,0*1,5 չափերի բիոզուգարաններից՝ լվացարանով։

Բիոզուգարանների մաքրումը կատարվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով։

Թափոններ. Շինարարության փուլում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ կենցաղային աղբ, աղտոտված լաթեր, մետաղական մասերի մնացորդներ(մետաղյա լարեր)։

Սոցիալական. Շինարարական աշխատանքներին ներգրավելու են 80-100 մարդ՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով։ Ներգրավվելու են համայնքի բնակիչներ, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով։

Բարեկարգում. Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում,

օգտագործված ճանապարհների կարգաբերում։ Կատարվելու է փոսերի լիցք՝ հողային զանգվածով։

9.1.2. Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը.

Ընդհանուր գործողությունները տևելու են 24 ամիս կամ 2 տարի՝ ըստ ժամանակացույցի/բուն շինարարական աշխատանքները տևելու են 20.5 ամիս կամ 533օր/։

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ըստ նախատեսված ժամանակացույցի՝ հերթականությամբ.

- Նախագծային աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Խրամուղիների նախապատրաստական աշխատանքներ
- Մալուխների անցկացում
- Կրող կոնստրուկցիաների տեղադրում
- Մալուխների, ինվենտորների, վահանակների տեղադրում
- Հողանցման համակարգի անցկացում
- Ճանապարհի կարգաբերում, ցանկապատ
- Կայանի կարգաբերում, էլեկտրասարքավորումների տեղակայում և այլն։

Ժամանակացույց (Սկիզբ)

ՀՀ	Աշխատանքի անվանումը	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՇԱԲԱԹՆԵՐՈՎ																							
		1				2				3				4				5				6			
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24
1	Համալիր փորձաքննություն և նախագծում																								
2	Սարքավորումների ձեռքբերում																								
3	Հողային աշխատանքներ																								
4	Հորատում և կրող կոնստրուկցիաների հիմքերի բետոնային աշխատանքներ																								
5	Խրամուղիների քանդման աշխատանքներ																								
6	Խրամուղիների նախապատրաստական աշխատանքներ																								
7	Մալուխների անցկացում																								
8	Խրամուղիների ետլիցք																								
9	Կրող կոնստրուկցիաների տեղադրում																								
10	DC խողովակների տեղադրում																								
11	Վահանակների տեղադրում																								
12	DC մալուխների մոնտաժում																								
13	Ավազակոպիճային ճանապարհի կառուցում																								
14	Ինվերտորների տեղադրում																								
15	AC վահանակների տեղադրում																								
16	Lan/Wi Fi համակարգի տեղադրում																								
17	Հողանցման համակարգի տեղադրում																								
18	Էլեկտրասարքավորումների մոնտաժում ենթակայանում																								
19	ԱՖԷԿ-ի միացումը ենթակայանին																								
20	Կայանի կարգաբերում, գործարկում և ավարտական փուլ																								

Ժամանակացույց (Շարունակություն)

ՀՀ	Աշխատանքի անվանումը	ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՇԱԲԱԹՆԵՐՈՎ																							
		7				8				9				10				11				12			
		25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47	48
1	Համալիր փորձաքննություն և նախագծում																								
2	Սարքավորումների ձեռքբերում																								
3	Հողային աշխատանքներ																								
4	Հորատում և կրող կոնստրուկցիաների հիմքերի բետոնային աշխատանքներ																								
5	Խրամուղիների քանդման աշխատանքներ																								
6	Հետևողական կոնստրուկցիաների ձգում, տարածքի ցանկապատում																								
7	Մալուխների անցկացում																								
8	AC մալուխների տեղադրում																								
9	Կրող կոնստրուկցիաների տեղադրում																								
10	DC խողովակների տեղադրում																								
11	Վահանակների տեղադրում																								
12	DC մալուխների մոնտաժում																								
13	Ավազակրպիճային ճանապարհի կառուցում																								
14	Ինվերտորների տեղադրում																								
15	AC վահանակների տեղադրում																								
16	Lan/Wi Fi համակարգի տեղադրում																								
17	Հողանցման համակարգի տեղադրում																								
18	Էլեկտրասարքավորումների մոնտաժում ենթակայանում																								
19	ԱԷԿ-ի միացումը ենթակայանին																								
20	Կայանի կարգաբերում, գործարկում և ավարտական փուլ																								

Ժամանակացույց (Շարունակություն)

ՀՀ	Աշխատանքի անվանումը	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՇԱԲԱԹՆԵՐՈՎ																							
		1				2				3				4				5				6			
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24
1	Համալիր փորձաքննություն և նախագծում																								
2	Սարքավորումների ձեռքբերում																								
3	Հողային աշխատանքներ																								
4	Հորատում և կրող կոնստրուկցիաների հիմքերի բետոնային աշխատանքներ																								
5	Խրամուղիների քանդման աշխատանքներ																								
6	Խրամուղիների նախապատրաստական աշխատանքներ																								
7	Մալուխների անցկացում																								
8	Խրամուղիների ետլիցք																								
9	Կրող կոնստրուկցիաների տեղադրում																								
10	DC խողովակների տեղադրում																								
11	Վահանակների տեղադրում																								
12	DC մալուխների մոնտաժում																								
13	Ավազակոպիճային ճանապարհի կառուցում																								
14	Ինվերտորների տեղադրում																								
15	AC վահանակների տեղադրում																								
16	Lan/Wi Fi համակարգի տեղադրում																								
17	Հողանցման համակարգի տեղադրում																								
18	Էլեկտրասարքավորումների մոնտաժում ենթակայանում																								
19	ԱՅԷԿ-ի միացումը ենթկայանին																								
20	Կայանի կարգաբերում, գործարկում և ավարտական փուլ																								

Ժամանակացույց (Վերջ)

ՀՀ	Աշխատանքի անվանումը	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՇԱԲԱԹՆԵՐՈՎ																							
		7				8				9				10				11				12			
		25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47	48
1	Համալիր փորձաքննություն և նախագծում																								
2	Սարքավորումների ձեռքբերում																								
3	Հողային աշխատանքներ																								
4	Հորատում և կրող կոնստրուկցիաների հիմքերի բետոնային աշխատանքներ																								
5	Խրամուղիների քանդման աշխատանքներ																								
6	Հետևողական կոնստրուկցիաների ձգում, տարածքի ցանկապատում																								
7	Մալուխների անցկացում																								
8	AC մալուխների տեղադրում																								
9	Կրող կոնստրուկցիաների տեղադրում																								
10	DC խողովակների տեղադրում																								
11	Վահանակների տեղադրում																								
12	DC մալուխների մոնտաժում																								
13	Ավազակուպիճային ճանապարհի կառուցում																								
14	Ինվերտորների տեղադրում																								
15	AC վահանակների տեղադրում																								
16	Lan/Wi Fi համակարգի տեղադրում																								
17	Հողանցման համակարգի տեղադրում																								
18	Էլեկտրասարքավորումների մոնտաժում ենթակայանում																								
19	ԱԷԷԿ-ի միացումը ենթկայանին																								
20	Կայանի կարգաբերում, գործարկում և ավարտական փուլ																								

9.1.3 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Ջուր: Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից: Պայմանագիրը կկնքի Կապալառու կազմակերպությունը՝ շինարարական աշխատանքների կատարման ժամանակ:

Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 2 հատ 2 տ տարողության բաքի մեջ : Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

Շինարարությունը տևելու է 533 օր, շինարարության ընթացքում աշխատելու են առավելագույնը 100 աշխատակից, որից 10-ը ԻՏՌ:

Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է տարածքի հրդեհամարման, մեքենաների անիվների լվացման, տարածքի ջրցանման համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

WË.ï. = (n x N + n1 x N1) x T, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 10 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 90 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է ՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 533 օր:

Wխ.տ.= (10 x 0.016 + 90 x 0.025) x 533 = 1284, 53 մ³/շին. ժամ. կամ 2,41 մ³/օր:

Ելնելով տարածքի կլիմայական պայմաններից, ինչպես նաև անվտանգության կանոններից շահագործման փուլում տարածքի ջրցան չի նախատեսվում:

Մեքենաների անիվների լվացման համար Շինարարության փուլում նախատեսվում է մեքենաների լվացում՝ 2-3 հատ, օրը 1 անգամ հաճախականությամբ, տեղադրվելու են 1 հատ լվացման կետ, ջրաքանակի նորման ընդունված է 0,8լ/վրկ: Շին.տեխնիկայի աշխատանքը հաշվարկված է 1040 ժամ:

Q2 = 0.8x 1=0,8 լ/վրկ կամ 2880լ/ժամ կամ 2.9մ3/ժամ

կամ՝ 2.9մ3*1040 ժամ =3016շին/ժամ

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

Մ1 = S1 x K1 x T, որտեղ՝

S1 – ջրվող տարածքի մակերեսը 2500 մ², (շինհրապարակ, ճանապարհներ)

K1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով՝ 104 (առավելագույնը 104օր) հողային աշխատանքների ժամանակ:

Մ1 = 2500x 0.015 x 104=3900մ³/շին. ժամ:

Շինարարության ժամանակահատվածի համար ընդամենը ծախսվելու է՝8200 մ³/շին. ժամ:

Օգտագործվող նյութեր.

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

- մալուխ
- մետաղ՝ ալյումին, պղինձ
- մեկուսիչ նյութեր
- բետոն, ամրան
- մետաղական խողովակներ
- մետաղական շերտապողպատ
- խիճ
- մետաղական ցանց
- փայտանյութ։

Հաղորդալարերը լինելու են պղինձ-ալյումինե։

Արևակայանի, և ենթակայանի կառուցման, համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում, մասնագիտացված կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով։ Բետոնն օգտագործվելու է հիմնականում արևակայանում մետաղական կոնստրուկցիաների հիմքերի բետոնացման աշխատանքների, հենասյուների, ցանկապատի, լուսավորության վահանակների տեղադրման, պահակակետի, ենթակայանի կառուցման ժամանակ։ Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից։

Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա։ Տարածքում վառելիքի պահեստավորում չի նախատեսվում։

Շահագործման փուլում բնառեսուրսների օգտագործում չի նախատեսվում, գործելու է միայն էլեկտրամատակարարման համակարգը։

9.2. Շահագործման փուլ.

Արևային կայան. համաձայն հանրային հանձնաժողովի կողմից ընկերությանը տրված լիցենզիայի՝ նախատեսվում է կառուցել 5000կՎտ հզորության արևային ֆոտովոլտային կայան, որը 110կՎ ցանցին միանալու է 1 հատ 110/2x0.8 կՎ 7000կՎԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայանի միջոցով, արևակայանը միացնել «Ոսկեհատ» 110կՎ օդային գծի մոտակա խարսխային հենարանին, կառուցելով 573մ երկարության 110կՎ լարման օդային էլեկտրահաղորդման գիծ։ Արևային էլեկտրակայանի պիկային հզորությունը կազմում է 5,50164 ՄՎՏ։

Արևակայանի տեղադրման համար նախատեսվում է կառուցել ցինկով գալվանապատված մետաղական կոնստրուկցիներ, որոնք ամրացվում են գետնին երկաթբետոնյա հիմքերով։ Ֆոտովոլային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 8592 հատFF բազմաբյուրեղային երկողմանի ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 635Վտ առավելագույն հզորությամբ, որոնք 10 հատ 350կՎտ և 6 հատ 250կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին։ 350կՎտ և 250կՎտ հզորությամբ փոխակերպիչները միացվում են 16 կամ 26 հատ հաջորդաբար միացված ֆոտովոլտային պանելներով։ Մոդուլների և փոխակերպիչների համար նախատեսված են MC4 տիպի կոնեկտորներ։ Ընտրվել են JAM72D42-635/LB ֆիրմային արտադրության 22.7%

ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 635Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ, մեկ մոդուլի չափսերը՝ 2465x1134x30մմ:
Փոխակերպիչները Ginlong (Solis) արտադրության, մոդելը Solis-250K-EHV-5G-PLUS 250կՎտ ելքային հզորության և Solis-S6-GU350K-EHV 350կՎտ ելքային հզորության, ցանցային տեսակի: Փոխակերպիչի հաստատուն հոսանքի "+" և "-" շղթաների մուտքերը պաշտպանված են 15Ա ապահովիչներով: Փոխակերպիչները ունեն համացանցին միանալու և տվյալները փոխանցելու հնարավորություն, նրանում ներկառուցված են DC և AC իմպուլսային գերլարրումների պաշտպանիչ սարքեր (SPD): Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվում են կոնստրուկցիայով հորիզոնի նկատմամբ 30° թեքվածությամբ:
Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունը ըստ շինարարական կլիմայաբանություն նորմերի 24մ/վ է (ՀՀՇՆ 22-01-2024):
Վահանակները տեղադրվելու են 5.2 հա մակերեսի վրա: Արևային կայանի վահանակների մաքրում կամ լվացում չի նախատեսվում, խիստ անհրաժեշտության դեպքում այն կիրականացվի չոր եղանակով:
Արևային ֆոտովոլտային կայանը 110կՎ ցանցին միանում է 7000կՎԱ 110/2x0.8կՎ տրանսֆորմատորի միջոցով:
Արևակայանի մալուխագիծ. Ֆոտովոլտային պանելների շղթաները միմյանց միացվում են պանելների մուտքին 4մմ² (EU)/12AWG(US), L=1200մմ և PV1-F1x4մմ² մալուխներով: Յուրաքանչյուր փոխակերպիչից դեպի ՏԵ ցածր լարման վահաններ էլեկտրամատակարարումն իրականացվում է ալյումինե հաղորդաջղերով պոլիվինիլքլորիդե մեկուսացմամբ, հարթ ժապավենով մետաղե զրահով: Արտաքին ծածկույթը պոլիվինիլքլորիդ նյութից է՝ АВБбШв տիպի 3x120մմ², 3x185մմ² հատույթների մալուխագծերով: Մալուխները խրամուղու մեջ տեղադրելու համար խրամուղու մեջ պատրաստվում է 100մմ հաստությամբ ավազե անկողին, այնուհետև տեղադրվում են մալուխները և ծածկվում 150մմ ավազե շերտով, որից հետո խրամուղին լցվում է ավազակոպճային խառնուրդով, այնքան որ հնարավոր լինի մալուխից 250մմ բարձրության վրա տեղադրել ազդանշանային ժապավեն, ապա խրամուղին լցվում է ավազակոպիճով: Մալուխները խրամուղում տեղադրվում են գետնից 0.7մ խորության վրա՝ օձաձև, ջերմային դեֆորմացիաներից խուսափելու համար: Մալուխները կարճ միացման և գերբեռնվածության հոսանքներից պաշտպանվում են մուտքային եռաֆազ 250Ա, 315Ա ավտոմատ անջատիչներով: Բաց տարածքում տեղակայվող ավտոմատ անջատիչները IP 65 տիպի են, իսկ փակ տարածքում՝ IP 31 տիպի:
Պաշտպանական հողանցում. Ֆոտովոլտային կայանի հողանցումն իրականացվել է համաձայն СНиП 3.05.06-96: Հողի մակերևույթին 0.6մ խորության վրա հավաքվում է հողանցման սարքվածքը (կոնտուրը), որը բաղկացած է.
· հողանցման հորիզոնական հաղորդիչից (40x4 շերտապողպատ),
· հողանցման հաղորդաձող (50x50x5, L=1.5մ անկյունակ),
· հողանցման հաղորդալարերից:
Հողանցման դիմադրությունը տարվա ցանկացած եղանակի չպետք է գերազանցի 4Օհմ: Պաշտպանական հողանցումն իրականացվում է հողանցման հաղորդալարերով: Այդ նպատակով ֆոտովոլտային վահանակների այլումինե իրանը հողանցման հաղորդալարով միացվում է հողանցման համակարգին: Բոլոր մետաղական ոչ հոսանքատար սարքավորումները պետք է հողանցվեն:

Ներտարածքային լուսավորության համակարգ. նախատեսվում է լուսավորության հենարանների տեղադրում, ստորգետնյա մալուխագծերի անցկացում, լուսավորության ավտոմատ ղեկավարման արկղի մոնտաժում: Լուսավորության հաշվարկն իրականացվել է Dialux համակարգչային ծրագրով՝ 3D մոդելավորմամբ, համաձայն ՀՀՇՆ 22-03-2017 նորմերի: Հաշվարկի միջոցով ընտրվել է լուսավորության հենարանների բարձրությունը, միջհենարանային հեռավորությունը, լուսարձակների հզորությունը և թեքման անկյունը: Dialux ծրագրով հաշվարկում օգտագործվել է 100լմ/վտ արդյունավետությամբ լուսարձակ:
Լուսավորության ցանցը կառուցվում է 4մ բարձրության մետաղական բարձակներով հենարաններով (բարձրությունը սահմանափակված է հաշվի առնելով ստվերների առկայությունը ֆոտովոլտային վահանակների վրա): Լուսավորությունը կառավարվում է լուսավորության ղեկավարման արկղից (ԼՂԱ):

Ենթակայան. նախագծով նախատեսվում է 480մ^2 տարածքով, 7000 կՎԱ հզորության 110/2*0,8 կՎ լարման ենթակայանի կառուցում, ենթակայանը միացվելու է «Ոսկեհատ» 110կՎ օդային գծի մոտակա խարսխային հենարանին՝ օդային գծի միջոցով:
Նախատեսվում է տեղադրել մեկ տրանսֆորմատոր: Տրանսֆորմատորի լրակազմը նախատեսված է տեղադրել հավաքովի մոնոլիտ հիմքերի վրա: Ուժային տրանսֆորմատորի տակ նախատեսված է յուղահավաք՝ 15մ^2 և յուղի հոր՝12մ^3 ծավալով, որը պետք է ներառի տրանսֆորմատորում առկա ամբողջ յուղը:
Նախատեսվում է նաև 0.8/0.4կՎ լարման սեփական կարիքների համար ենթակայան:

Օդային գիծ. կառուցվելու է մոտ 573 մետր երկարության 110կՎ լարման օդային գիծ՝ 4 հատ մետաղական հենասյուններով՝ երկաթբետոնյա հիմքով:Նոր կառուցվող 110կՎ ՕԳ-ն մոնտաժվում է նոր տեղադրվող խարսխային՝ №1 և №4 հենարաններով, ինչպես նաև միջանկյալ՝ №2 և №3 հենարաններով: Վերջին №4 հենարանից 110կՎ ՕԳ-ն միանում է նոր տեղադրվող 7000կՎԱ հզորության ենթակայանին: Ուղեգիծն անց է կացվում համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողատարածքներով, որոնց գործառնական նշանակությունն են՝ 2-ը արտավայր, 1-վարելահող, 1-ը՝ այլ հողատեսք: Օդային գիծն անցնելու համայնքային հողերով, որի համար համայնքի հետ կկնքվի սերվիտուտի պայմանագիր/այն ընթացքի մեջ է/: Հաղորդալարերը լինելու են ալյումինե և պողպատե:

Տեսահսկման համակարգ. Տեսահսկման համակարգն ապահովում է պահպանվող տարածքի շուրջօրյա տեսահսկում, ինֆորմացիայի գրանցում և արտացոլում պահակատան էկրանին: Տարածքի տեսահսկման համակարգը բաղկացած է հասցեավոր տեսախցիկներից, ինֆորմացիոն ստորգետնյա մալուխներից, ցանցային կոմուտատորներից:
Ինֆորմացիոն և տեսահսկման բոլոր մալուխներն անցկացվում են խողովակներով:

Պահակակետ. Պահեստային շինություն.տարածքում կառուցվելու է պահակակետ, որը ներառելու է պահեստային շինություն՝ ներքին հարդարումով: Շինությունը հատակագծում ունի ուղղանկյուն տեսք՝ 6.58 x 4.9մ արտաքին չափերով, հարկի մաքուր բարձրությունը 2.8 մ է: Արտաքին պատերն իրականացվելու են տուֆ քարից՝ երկշերտ շարվածքով, հիմքը՝ ջրամեկուսիչ բիտումային ծածկով: Տանիքի ծածկույթն իրականացվելու է պրոֆիկավորված ցինկապատ թիթեղից: Պահակատան շինությունում նախատեսվում է առանձնացված տարածք, որն օգտագործվելու է որպես պահեստ՝ վնասված վահանակների ժամանակավոր պահման համար: Պահակակետում մոնիթորինգի նպատակով տեղադրվելու են հեռուստացույց, մոնիտոր՝ անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու համար:

Կրակմարիչներ. պահակատան շենքի ներսում և ենթակայանի տարածքում նախատեսվում է հակահրդեհային ազդանշանային համակարգ՝ կրակմարիչ, ծխի և

ջերմաստիճանի տվիչներ։

Ցանկապատում. ամբողջ տարածքը ցանկապատվելու է 2 մ, ենթակայանը՝ 3մ բարձրության մետաղական ցանկապատով։

10. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, մարդու առողջություն(շինարարության և շահագործման փուլեր).

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վաննաև բնակավայրի վարչական տարածքում։ Գործունեությունն իրականացվելու է 6.5 հա տարածքի վրա։ Նախատեսվում է կառուցել 5000կՎտ հզորության արևային ֆոտովոլտային կայան, որը 110կՎ ցանցին միանալու է 1 հատ 110/0.8/x0.8 կՎ 7000կՎԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայանին՝ մոտ 573մ երկարության 110կՎ լարման օդային գծով։

Արևային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը շինարարության և շահագործման փուլերում հիմնականում կապված են՝

- օդային ավազանի՝ պայմանավորված շինտեխնիկայի, հողային աշխատանքների արդյունքում օդային ավազան ծխագազերի, փոշու արտանետումների,
- ջրային և հողային ռեսուրսների օգտագործման,
- կենսաբազմազանության, լանդշաֆտի փոփոխությունների,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների կառավարման,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և մարդու առողջության հետ։

Արևային ֆոտովոլտային կայանը էլեկտրաէներգիայի ստացման ամենատարածված ձևերից մեկն է։ Դրա միջոցով հնարավոր է դառնում արևի էներգիան կերպափոխելու էլեկտրական հաստատուն կամ փոփոխական հոսանքի, և ունենալ մատչելի գներով էլեկտրաէներգիայի սպառում, ինչը կարևոր է բնառեսուրսային վառելիքից զուրկ Հայաստանի հանրապետության համար։

Կառուցման բոլոր տարրերը պետք է համապատասխանեն ազգային ստանդարտներին, շինարարական նորմերին, տեխնիկական կանոնակարգի (ՏԿ)-ի պահանջներին։

Գործունեության տարածքը համայնքային հող է եղել, բնակիչների կողմից օգտագործվել է որպես արոտավայր։ Գործունեության իրականացման ընթացքում ենթակառուցվածքների փոփոխություններ չեն առաջանալու, կատարվելու են միայն հողային աշխատանքներ։

ՇՄԱԳ-ի հիմնական նպատակն է գործունեության իրականացման արդյունքում վեր հանել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բոլոր ազդեցությունները՝, մշակել ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան բնապահպանական և սոցիալական մեղմման ուղղված միջոցառումներ և ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները։ Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, վերջինիս վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական նյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները։

Կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային

պայմանների ուսումնասիրություն, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան արևային կայանի շինարարության և շահագործման ընթացքում: Նախատեսվող գործունեության տարածքը ընտրվել է այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը: Տարածքի հողի նպատակային նշանակությունը փոխվել է՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների:

Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու արևային կայանի, ենթակայանի անվտանգ շահագործման, հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, ինչպես նաև թափոնների առաջացման հետ:

10.1 Օդային ավազան.

Շինարարության փուլ.

Գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան լինելու են արտանետումներ ծխագազերի տեսքով՝ ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի շահագործումից, ինչպես նաև հողային աշխատանքների (փորման, բեռնման, բեռնաթափման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով: Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները.

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /1040 ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0,1	0,374
CH (ածխաջրածիններ)	0,243	0.00067	0.0025
NOx (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.3	0.11	0,411
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.0119	0,044
Ծծմբային անհիդրիդ		0,011	0,0416
Անկազմակերպ փոշու արտանետում		0,03	0.057

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայանի շահագործման ընթացքում աղտոտումը գործնականում զրոյական է, օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է գնահատել նշված ցուցանիշներից շատ ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների աշխատանքից, ինչը կրելու է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ: Արևային կայանի համար նախատեսված տարածքը շատ հեռու է բնակելի՝ Վաննաև գյուղի տարածքից՝ մոտ 839մ հեռավորության վրա, ուստի որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

Շինարարության փուլում Օդային ավազան արտնետումները նվազեցնելու

նպատակով կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ։

Շահագործման փուլում օդային ավազանի և կլիմայի վրա հնարավոր ազդեցություններ չեն կանխատեսվում։

10.2 Հողային ռեսուրսներ.

Շինարարության փուլ։ Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ արևակայանի, ենթակայանի հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի,կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների։ Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը էներգետիկայի։ Տարածքում առկա է հողաբուսաշերտ՝ 0.2մ հզորության։

ՀՀ Ազգային Ագրարային համալսարանի Օրգանական գյուղատնտեսության լաբորատորիայում կատարվել է գործունեության ենթակա տարածքի հողանմուշի անալիզ, համաձայն որի հետազոտվող տարածքի հողանմուշի միջավայրի ռեակցիան թույլ թթվային է, ջրալույծ աղերի պարունակությունը գտնվում է բույսերի համար թույլատրելի, նպաստավոր սահմաններում։Բույսերին մատչելի սննդատարրերի(NPK) պարունակությամբ՝ ազոտով, ֆոսֆորով և կալիումով միջակ ապահովված։Հավելված 10։

Արևային կայանի կառուցման շինարարության փուլում կատարվելու են հողի գրունտի քանդման աշխատանքներ՝ մեխանիզմներով և ձեռքով։

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի, տրանսֆորմատորի և յուղընդունիչի տեղադրման, ենթակայանում մալուխային խրամուղիների կառուցման, ցանկապատի հենասյուների տեղադրման, մետաղացանցերի անցկացման համար հողային աշխատանքներ։

Ենթակայանի և մալուխագծերի կառուցման ժամանակ, հողային գրունտի փորման արդյունքում հանվելու է մոտ 12մ^3 գրունտ, որից ենթակայանի կառուցումից՝ մոտ 10մ^3, մալուխագծի անցկացումից՝ մոտ 2 մ^3։ Հանված գրունտը՝ 11մ^3 և բուսահողը՝ 1մ^3 տեղում հարթեցվեու է։

Արևային կայանի հետ կապված գործողությունների արդյունքում հանվելու է մոտ 287մ^3 գրունտ, որից հանվող բուսահողի ծավալը կազմելու է 15.41մ^3։ Հանվող հողային զանգվածը կազմելու է 271.59մ^3 , որից 66մ^3 հողային զանգվածը կատարվելու է հետ լիցք, մնացած 205,59մ^3–ը կհեռացվի աղբավայր՝ համայնքի համաձայնությամբ։

Հանվելու է 282,59մ^3 հողային գրունտ, որից 77 մ^3 կատարվելու է հետ լիցք, մնացած 205,59մ^3-ը կհեռացվի աղբավայր՝ համայնքապետարանի կողմից հատկացված վայր։ Ընդամենը հանվելու է 299մ^3 հողային գրունտ, որից 16,41^3 ծավալի բուսահող, որն օգտագործվելու է բարեկարգման համար։

Հաշվետվությունում նախատեսվում են գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսների վրա բացասական ազդեցությանն ուղղված բնապահպանական միջոցառումներ։

Շահագործման փուլ. հողային ռեսուրսների վրա հնարավոր էական ազդեցություն չի կանխատեսվում։ Արևային մոդուլներով զբաղեցված տարածքում ստեղծվելու է նոր էկոհամակարգ, առաջանալու են ստվերային տարածքներ, հողի խոնավության նոր ռեժիմ։ Նկատի ունենալով թվարկված փոփոխությունները, հնարավոր են հողի որակի առավել

դրական փոփոխություններ։

10.3 Ջրային ռեսուրսներ.

Շինարարության փուլ։ Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ»ՍՊԸ ընկերության կողմից կատարված ուսումնասիրության՝ տեղամասում ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 5 մետրից խորը հորիզոններում։ Գործունեության և հարակից տարածքում բացակայում են մակերևութային ջրային ռեսուրսները, ուստի ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը բացակայում է։

Ամենամոտ ջրային ռեսուրսը՝ գետը գտնվում է 2986 մ, Սևանա լիճը գտնվում է 3858մ հեռավորությունների վրա։ Նկատի ունենալով մեծ հեռավորությունները գործունեության իրականացումն ուղղակի ազդեցություն չի կարող ունենալ ջրային ռեսուրսների վրա։

Շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով և բալոններով՝ ըստ կարիքի։ Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական որակի ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի։ Տեխնիկական ջրի մատակարարման պայմանագիրը կկնքվի գործունեության իրականացման շինարարության փուլում՝ համապատասխան լիցենզիա ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ, հստակեցնելով ջրի մատակարարաման աղբյուրը։

Կեղտաջրերի հեռացում. շինարարության փուլում տեղադրվելու է 1x1,5 չափերի 1 հատ բիոզուգարան, որոնց սպասարկումը շիանարարության փուլում կատարվելու է մասնագիտացված ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով։

Նախատեսվող գործունեության տարածքում մակերևութային ջրային հոսքերի բացակայությամբ պայմանավորված՝ արևային կայանի շինարարության փուլում մակերևութային և գրունտային ջրերի բաշխվածության փոփոխություն չի ենթարկվելու, ուստի արևակայանի շինարարության ընթացքում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները բացակայում են։

Շահագործման փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցություն չի նախատեսվում, քանի որ գործունեության տարածքում և կից բացակայում են մակերևութային ջրային ռեսուրսները։

10.4 Կենսաբազմազանություն.

Շինարարության փուլ։ Արևակայանի և ենթակայանի կառուցման տարածքը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր են՝ հողատեսքը էներգետիկայի։ Բնական լանդշաֆտները չոր տափաստաններ են։ Տարածքն անտառածածկ չէ, տարածքում բացակայում է ծառերը, ծառաթփերը, առկա է տարախոտային բուսականություն։ Նախկինում տարածքն օգտագործվել է որպես արոտավայր, ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների, ուստի ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, բացակաում են։

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն՝ պայմանավորված կենդանիների շարժունակությամբ։

Շինարարության ընթացքում՝ տեխնիկական միջոցների աղմուկի մակարդակի ավելացման պատճառով որոշ տեսակներ հնարավոր է հեռանան այդ տարածքներից, սակայն դա կունենա ժամանակավոր բնույթ, հետագայում հնարավոր է վերադառնան իրենց

նախկին տարածքները: Գործունեության իրականացման հետևանքով կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում:

Շահագործման փուլ: Արևային էլեկտրակայան կառուցելու արդյունքում տարածքի մի մասը ծածկվում է արևային մոդուլներով և ստվերվում է հողի զգալի մասը: Արևային էլեկտրակայանի մոդուլները ստվերում են զբաղեցված տարածքի մոտ 80 տոկոսը՝ մասնակիորեն լուսավորելով տարածքները, որտեղ հնարավոր է առաջանա բուսականություն: Էկոհամակարգի վրա որոշակի ազդեցություն է թողնելու նաև հողի խոնավության նոր ռեժիմը, որը հետևանք է լինելու մթնոլորտային տեղումներից առաջացող խոնավության անհամաչափ բաշխման: Արևային մոդուլներով ծածկված տարածքի տեղումները ցած հոսելով մոդուլների ցածր եզրից՝ բաշխվելու են տարբեր ձևով և հնարավոր է կենսաբազմազանության առումով որոշակի դրական փոփոխություն առաջացնել:

Հաշվի առնելով շահագործման փուլում նոր էկոհամակարգի ձևավորման հնարավորությունը և նպաստավոր պայմանները, կենսաբազմազանության վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում:

10.5 Թափոններ.

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ աղբի, օգտագործվող նյութերի մնացորդների, յուղոտված լաթերի տեսքով: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների՝ գործունեության արդյունքում առաջացող թափոնները պատկանում են 3-5-րդ դասերին:

Առաջանալու է.

- մալուխների, հաղորդալարերի մնացորդներ՝ կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ(ծածկագիր՝ 35131200 01 995)՝10կգ, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված ալյումինե հաղորդալար (ծածկագիր՝ 35310105 01 99 5)՝ 3կգ և օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 3531030501013)՝4կգ թափոնների տեսքով:
- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4)՝ 2կգ/տարի:
- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 205,59մ^3:
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)՝ (ծածկագիր՝ 91200400 01 00 4)՝ 12000կգ/տարի քանակով:

Կենցաղային աղբի հաշվարկները.

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է/ըստ ամենածանրաբեռնված հերթափոխի/,

հետևաբար,

M=100*120=12000կգ/տարի

Շինարարական աշխատանքները տևելու են 2 տարի, հետևաբար կենցաղային աղբի քանակը կկազմի.

M=2*12000=24000կգ/տարի կամ 45կգ/օր

Շահագործման փուլում. Արևակայանի և տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման ընթացքում՝ հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ կառաջանան վտանգավոր թափոններ։ Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի N 430-Ն և N 342-Ն հրամանների՝ հնարավոր առաջացող թափոններն են.

- Հալոգեններ, պոլիքլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ 10 տոննա քանակով։ Թափոնի առաջացման հնարավոր քանակը պայմանավորված է տրանսֆորմատորում յուղի քանակությամբ։
- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4)՝ 2կգ քանակով։
- Կտորների տեսքով ասֆալտբետոնի և ասֆալտբետոնե խառնուրդներ (4-րդ դաս՝ 31403502 01 00 4)՝ 8մ^3 քանակով։
- Յուղերով աղտոտված ավազ (կոշտ՝ յուղի պարունակությունը 15%-ից ավել (3-րդ դաս՝ 31402303 04 03 3)՝ 0,5մ^3։

Հաշվետվությունում նախատեսվում են թափոնների ազդեցության մեղմմանն ուղղված միջոցառումներ, որոնց ճիշտ կառավարման արդյունքում ազդեցությունները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը։

Վտանգավոր թափոնները լիցենզավորման ենթակա գործունեություն են՝ համաձայն՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, ուստի վերջիններիս գործածությունը պետք է իրականացվի համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների կողմից։

10.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Ինստիտուտի աշխատակիցների կողմից 2025թ. մարտի 14-ին կատարվել է «Սոլար Սթար Իքս» ՍՊԸ-ին պատկանող Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վաննաև բնակավայրի 6.5հա մակերեսում արևային կայանի համար նախատեսված տարածքի ուսումնասիրություն։ Համաձայն եզրակացության՝ Վաննաև բնակավայրում 4.83. դասիչի տակ գրանցված են գյուղի հյուսիսային մասում գտնվող 9-13-րդ դդ. խաչքարերը 4 հուշարձան, որոնք գտնվում են նշանակալի հեռավորության վրա և ազդեցության ենթարկվել չեն կարող։ Տեղանքի հնագիտական ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ պատմա-մշակութային որևէ միավոր կամ դրանց հետքեր, հնագիտական նյութեր չեն փաստագրվել։ Ուստի արևային կայանի համար նախատեսված տարածքը հնագիտական և պատմա- մշակութային առումով որևէ խոչնդոտ չունի, քանի որ այստեղ պատմա-մշակութային միավորներ չեն փաստագրվել։ Հավելված 7։

Քարտեզներ և լուսանկարներ

Քարտեզ 1



Վարդենիս համայնքի Վանեվան գյուղի վարչական սահմաններում գտնվող «Մոլար Սթար Իքս» ՍՊԸ-ի կողմից արևային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված 6,5 հա ընդհանուր մակերեսով տարածքի տեղադիրքը

Քարտեզ 1ա

Լուսանկար 1. «Սոլար Սթար Էքս» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Վանեվան գյուղի վարչական սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքը

Լուսանկար 2. «Սոլար Սթար Էքս» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Վանեվան գյուղի վարչական սահմաններում արևային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի հյուսիս-արևմտյան հատվածը

11

10.7 Աղմուկ և թրթռում.

Շինարարության փուլ: Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը ցածր է, քանի որ բացակայում են աղմուկ առաջացնող արտադրությունները: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպատություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 70 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Արևային էլեկտրակայանի շինարարության ընթացքում բնակավայրերին կամ առանձին բնակելի տներին, մեքենաների աղմուկի մակարդակը չի կարող հասնել, հաշվի առնելով բնակավայրերից ունեցած հեռավորությունը՝ մոտ 839մ: Բացի այդ գործունեության ընթացքում աղմուկ առաջացնող շինտեխնիկայի օգտագործումը սահմանափակ է կամ քիչ հավանական, քանի որ կատարվելու են միայն հողային, բետոնապատման աշխատանքներ: Աղմուկի մակարդակի հաշվարկ չի նախատեսվում, քանի որ մոտակա բնակելի տները գտնվում են բավական հեռու և չի կարող շինտեխնիկայի աղմուկի և թրթռումների մակարդակները հասնել բնակիչներին:

Միաժամանակ համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և շինհրապարակին հարակից տարածքներում շատ ցածր կլինի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերից:

Շահագործման փուլում որոշակի աղմուկի ավելացում կնկատվի ենթակայանի մոտ, սակայն այն կլինի ոչ էական, քանի որ արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակիչների վրա:

10.8 Էլեկտրական և մագնիսական դաշտ.

Արևակայանը և ենթակայանը նախագծվել են ՀՀ և միջազգային ստանդարտներին համապատասխան: Միաժամանակ նկատի ունենալով բնակավայրերից ունեցած հեռավորությունը, այն չի կարող զգալի էլեկտրական և մագնիսական դաշտ ստեղծել և որևէ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և բավականին մեծ հեռավորության վրա գտնվող բնակավայրերի վրա:

10.9 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարության փուլ: Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված.

- բնական աղետների(երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում,փոթորիկ),
- հրդեհների առաջացման, հեղուկ նյութերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ-ի կողմից կատարված ուսումնասիրությունների՝ գործունեության ենթակա տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակ կարող է ստեղծվել.

- հնարավոր հրդեհային իրավիճակների,
- կլիմայական և այլ երևույթների (երկրաշարժ, քամի և այլն) դեպքում:

Արտակարգ իրավիճակների և անվտանգության ազդեցությունները նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

10.10 Մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն.

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված.

. ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ էներգետիկայի, քաղաքաշինական, առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման,
- ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- շինտեխնիկայի շահագործման,

- արտակարգ իրավիճակների առաջացման,
- շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Շինարարական աշխատանքների ընթացքում մարդու առողջության և անվտանգության վրա անմիջական ազդեցությունը կապված է նաև էլեկտրահարման, սանիտարական իրավիճակի և այլ գործոնների հետ: Պոտենցիալ վտանգ առողջության և անվտանգության համար կարող է առաջանալ խմելու ջրի և սննդամթերքի որակի (աղտոտման) պատճառով:

Կայանի կառուցման փուլում պահպանվելու են մարդկանց կյանքի և առողջության ապահովման պայմանները:

Շահագործման փուլում Արևակայանի, ենթակայանի անվտանգության գոտու ապահովումը նախատեսված է ոլորտին առնչվող ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 21 ապրիլի 2023 թվականի «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին» N583-Ն որոշման, տեխնիկական կանոնակարգերի, Առողջապահության նախարարության հրամանների պահանջներին համապատասխան:

10.11 Սոցիալական գործոններ.

Շինարարության փուլ: Գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վաննաև բնակավայրի վարչական տարածքում:

Արևային կայանի կառուցումը նախատեսում է որոշակի սոցիալական ազդեցություններ, կապված.

- Աշխատանքների իրականացման ընթացքում՝ կից գտնվող արոտավայրերի, ճանապարհի հնարավոր խաթարումներ, եթե աշխատանքները կատարվեն անփութորեն և դուրս գան նախատեսվող գործունեության սահմաններից կամ չնախատեսված հանգամանքներում վնասվեն արոտավայրերի տարածքները:
- Բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և շինարարական տեխնիկայի տեղաշարժից:
- Դրական սոցիալական ազդեցությունները կապված կլինեն տարածքում նոր ծառայությունների և ենթակառուցվածքների ստեղծման, ինչպես նաև նոր՝ 80-100 աշխատատեղերի բացման հետ:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շահագործման փուլում լինելու են դրական սոցիալական ազդեցություններ, այն կնպաստի.

- Հայաստանի Հանրապետությունում ներմուծվող էներգառեսուրսներից կախվածության նվազմանը, կանաչ էներգիայի զարգացմանը:
- Համայքում նոր ծառայությունների և ենթակառուցվածքների ստեղծմանը:
- Աշխատատեղերի բացմանը:
- Մարզի և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Շահագործման փուլում մոնիթորինգ իրականացնելու նպատակով ընդգրկվելու են 4 աշխատողներ, որոնք աշխատելու են հերթափոխային գրաֆիկով: Ներգրավվելու են հիմնականում համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

Օդային գծի ուղեգիծը նախագծվում է այնպես, որպեսզի շրջանցվի գյուղացիների սեփական կամ վարձակալած հողատարածքները: Իսկ գործունեության վայր մոտենալու համար օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհը: Բնակիչներից հողի ձեռք բերման կամ փոխհատուցման հետ կապված խնդիրներ չեն առաջանալու:

Նախաձեռնողի և համայնքի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել փոխադարձ համաձայնություն՝ մասնակցություն ունենալ համայքի և Վանևան բնակավայրի զարգացման ծրագրերին, ֆինանսական աջակցություն ցուցաբերել համայնքի և բնակավայրի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Այդ նպատակով համայնքի և Նախաձեռնողի միջև կկնքվի պայմանագիր՝ ըստ համայքի և բնակավայրի խնդիրների լուծման առաջնահերթությունների:

Նախատեսվող գործունեությունը համահունչ է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության դրույթներին: Գործունեության իրականացումը կնպաստի համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը, կանաչ էներգիայի զարգացման հնարավորությունների կիրառմամբ էլեկտրամատակարարման համակարգի արդիականացմանը:

10.12 Լանդշաֆտ և Բարեկարգում.

Գործունեության իրականացումն առաջացնելու է լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն: Սակայն այն չի ունենալու տեսողական ազդեցություն, քանի որ գործունեության տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու՝ կից գոյություն ունեցող գրունտային ճանապարհին:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում: Կատարվելու է փոսերի լիցք՝ հողային զանգվածով:

ՕԳ-ի անցկացումը լանդշաֆտի վրա կլինի նվազագույն, չի հանգեցնի տարածքային վիզուալ փոփոխությունների, քանի որ կից առկա են «ՀԷՑ»ՓԲԸ-ին պատկանող էլեկտրահաղորդման գծեր:

11.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը (Բնապահպանական կառավարման պլան).

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է գնահատման հաշվետվությունում նշված գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, ինչպես նաև թափոնների կառավարման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

Նախագծի և բնապահպանական միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում՝ գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

11.1 Օդային ավազան.

Շինարարության փուլ. Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով.

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- ջրցանը կատարել ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- ցանկապատել շինարարական հրապարակը նախագծին համապատասխան,
- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով՝ համայնքապետարանի համաձայնությամբ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները օգտագործել միայն սարքին վիճակում, պարբերաբար իրականացնել ստուգումներ։

Շահագործման փուլում օդային ավազանի վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում։

11.2. Հողային ռեսուրսներ.

Շինարարության փուլ։ Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է .

- հողի բերրի շերտի հանել և պահել համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,
- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:
- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը մաքրել խոշոր քարերից, թփերից, կոճղերից,
- հողի բերրի շերտը օգտահանել, հեռացնել ապարները, պահեստավել առանձին,
- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկել խոտաբույսերով կամ հողաթմբերի ամրացնել, ծածկել անջրթափանց թաղանթով,
- մալուխագծի անցկացման աշխատանքների ժամանակ հանվող հողային զանգվածը կկուտակվի անմիջական հորատանցքերի հարևանությամբ՝ծածկված վիճակում,

- արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կուտակել տարածքում՝ ծածկվելով անջրթափանց թաղանթով,

- հողային զանգվածի մի մասն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար,

- ավելցուկային գրունտը տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր,

- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կատարել այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,

- շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները,

- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,

- շինարարական նյութերը տարածք կբերվեն օգտագործումից առաջ, կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան կայանել շինհրապարակի առանձնացված տեղերում,

- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրել մանրախիճ կամ բետոնասալեր,

- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով,

- շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կատարել գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:

Շահագործման փուլում Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է տարածքների մաքրում և բարեկարգում:

11.3 Ջրային ռեսուրսներ.

Շինարարության փուլ: Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.

- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շշերով),

- աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով ենթակայանի տարածքում կտեղադրվի համապատասխան տարողության ջրի բաք,

- շինհրապարակում կտեղադրվի պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով,

- պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,

- ճանապարհների ջրցանն իրականացնել տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,

- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար կօգտագործվի տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործել պարզարանի ջուրը,

- շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարաններ,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախատնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի,

- բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթևեկությանը չխոչընդոտելու և հողածածկը և ասֆալտածածկը չվնասելու համար։

Կեղտաջրեր. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և շինարարական կան հոսքաջերի շրջակա միջավայրի աղտոտման կանխարգման նպատակով.

- կտեղադրվի 1 հատ 1x1.5 չափերի բիոզուգարան,

- բիոզուգարանների մաքրումը կկատարվի լիցենզիա ունեցող մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով։

Շահագործման փուլում. Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է.

- աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները կհոգան սանիտարական հանգույցից (բիոզուգարան),
- բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով։

Արևային կայանի վահանակների մաքրում կամ լվացում չի նախատեսվում, խիստ անհրաժեշտության դեպքում այն կիրականացվի չոր եղանակով։

11.4 Կենսաբազմազանություն.

Շինարարության փուլ. գործունեության իրականացման հետևանքով կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու համար նախատեսվում է.

- բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելիս առաջնորդվել Կառավարության 31.07.2014 թվականի N 781 որոշման դրույթներով,

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը պետք է տեղեկացնի համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,

- շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,

- խախտված հողային զանգվածի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով,

- շինարարական աշխատանքներն իրականացնել միայն ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու, բնականոն վարքին չխանգարելու համար։

Շահագործման փուլում Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է.

- հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով,

- խախտված հողաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով,

- ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանականգնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով։

11.5.Թափոններ.

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

-խուսափել տարածքում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից,

- նյութերի մնացորդները(մետաղական մասեր, մետաղալարեր) Կապալառու կազմակերպության կողմից հավաքել հատուկ տարողությունների մեջ և տեղափոխել,

- մետաղական մասերի և նյութերի մնացորդները հանձնել համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

-շինարարական թափոնները՝ բետոնի մնացորդներ, եռակցման խարամը, մեկուսիչները, հավաքել պարկերի մեջ և տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, անհրաժեշտ քանակի դեպքում հանձնել շինարարական ընկերություններին,

-ավելցուկային հողային գրունտը տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր,

- շինհրապարակում կենցաղային աղբը հավաքել համապատասխան աղբարկղերում և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ,

-շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին ։

Շահագործման փուլում Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է.

- տրանսֆորմատորի տակ կառուցել 1 հատ առանձին յուղընդունիչ,

- հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացնել և հանձնել համապատասխան վերամշակող կազմակերպություններին,

- հալոգեններ, դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքել համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառել spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,

- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնել ասֆալտապատող ընկերություններին,

- յուղերով աղտոտված ավազը կամ մանրախիճը հանձնել մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- սև և գունավոր մետաղի ջարդոնը հանձնել մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված վահանակներ և այլ խոտանված մասեր, որոնք կուտակվելու են տարածքում՝ փակ պահեստային շենքում, մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը: Արևային կայանի ներկրված վահանակներն ունեն օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված վահանակները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակաշրջանում շարքից դուրս եկած վահանակները կկուտակվեն պահեստարանում՝ մինչև դրանց արտահանման կամ վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

11.6. Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Ուսումնասիրությունների ընթացքում շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել այլ տեղամասերում, մինչև համապատասխան թույլտվության տրամադրումը:

11.7 Աղմուկ և թրթռում.

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում,

- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային

միջոցների շարժիչները։

ՕԳ-ի և դրանց տարրերի անցկացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաձոպանների պարը, թրթռումը։

Շահագործման փուլում Արևակայանի, ենթակայանի և դրանց տարրերի անցկացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաձոպանների պարը, թրթռումը։

Արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա։

11.8 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարության փուլ։ Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունները մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել հրդեհանվտանգության նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով, տեղադրել ջրի բաք,
- աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելու պայմաններին, տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,
- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- օդային գծերը կառուցել ապահովելով 6մ՝ եզրային հաղորդալարերի հեռավորությունն ըստ հորիզոնականի, դրանց առավելագույն շեղման դեպքում, մինչև արտադրական, պահեստային, վարչակենցաղային և հանրային շենքերի ու կառույցների մերձավոր մասերը,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել։

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- արևակայանն և ենթակայանն ապահովել հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ավտոմատ կառավարման համակարգով, հրդեհաշիջման միջոցներով՝ հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով,
- արևակայանի տարածքում տեղադրվելու են փոխակերպիչներ(ինվենտորներ), տեսահսկման համակարգ՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, հրդեհաշիջման վահանակ,
- պարբերաբար ստուգվելու են աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը,
- գործունեության տարածքում փակցվելու են արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

կարգով,

- անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով նախատեսվում է, մշտական մոնիթորինգ, հերթափոխային գրաֆիկով՝ 4 աշխատողի միջոցով։

Օդային գիծ.

- հենարանի շուրջ՝ 2 մ շառավղով խոտի և թփուտների մաքրում,

- ՕԳի անվտանգության գոտու պահպանում՝ 20մ,

- ՕԳ-ի ուղեգծի երկայնքով երթանցի և դրանց մերձենալու համար տնկիներից, կոճղերից, քարերից և այլնից մաքրված հողի շերտի ապահովում՝ ոչ պակաս 2,5 մ լայնությամբ,

- ցանկացած եղանակի ժամանակ ՕԳ-ին մոտենալու համար ճանապարհի ապահովում՝ ոչ ավելի ՕԳ ուղեգծից 0,5 կմ-ից։

11.9 Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.

Շինարարության փուլում աշխատողների առողջությունը, աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարականկենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- շինարարության ամբողջ ընթացքում անհրաժեշտ է ապահովել բժշկական միջոցների բավարար քանակը, ջրի և սննդամթերքի որակի, դրանց տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը:

- շին.հրապարակն ապահովվել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով,

- աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),

-աշխատողներին ապահովել էլեկտրապաշտպանության միջոցներով, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ռիսկերի ազդեցությունը կանխարգելելու համար, իսկ դրա անհնարինության դեպքում՝ դադարեցնել աշխատանքը,

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ, տեղեկատվական, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- շինհրապարակն ապահովել հակահրդեհային միջոցներով, լուսավորության սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,

-վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնեության վայրում խոտանված սարքերի կուտակումները,

-վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- մալուխային և օդային գծերի տեղադրումը կատարել բացառելով մալուխային գծերի

հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել։

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոնները։

Շահագործման փուլում Մարդու առողջության պահպանման նպատակով նախատեսվում է.

-ապահովել առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով,

- կիրառվող հաղորդալարերի և մալուխների թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանի անցկացման եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին,

- օդային գծի բոլոր հենարանները համարակալել, նշագրել և գունավորվել՝ ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1943-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան,

- էլեկտրահաղորդման հենասյունների վրա տեղադրել էլեկտրական լարման մասին համապատասխան նշագրում՝ մարդու առողջության և անվտանգության պահպանման նպատակով,

-պահպանել լարերի ամենացածր կետից մինչև գետնին ամենափոքր հեռավորությունը(ջուր, ճանապարհ, հուն)՝ գծի տակ գտնվող մարդկանց և տրանսպորտային միջոցների անվտանգությունն ապահովվելու նպատակով,

- Էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի,

- պահպանել թռիչքներում միջֆազային հեռավորությունները, տեխնիկական կանոնակարգի պահանջները՝ հաղորդալարի եզրաչափը հողից։

Արևակայանի կառուցման և շահագործման աշխատանքները պետք է կատարել ՀՀ կառավարության 21 ապրիլի 2023 թվականի «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 583-Ն որոշման պահանջներին համապատասխան:

11.10 Սոցիալական գործոններ.

Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 80-100 մարդու համար, որոնք աշխատելու են 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով։

Արևակայանը Վաննաև բնակավայրից գտնվում է մոտ 839մ հեռավորության վրա։ Գործունեության իրականացումը չի խոչընդոտելու ենթակառուցվածքներին, քանի որ գտնվում է համապատասխան նորմատիվային հեռավորության վրա և չի խաչվելու վերջիններիս հետ։

- ՕԳ-ի ուղեգծի անցկացման ժամանակ բացառել գյուղացիներին պատկանող՝ սեփական կամ վարձակալած հողատարածքներում գյուղատնտեսական աշխատանքների կատարման խոչընդոտումը։

Շահագործման փուլում ընդգրկվելու են 4 աշխատողներ՝ մոնիթորինգ իրականացնելու նպատակով, հերթափոխային գրաֆիկով։ Գործունեությունը նպաստելու

է համայնքի և բնակավայրի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը։

- ՕԳ-ի ժամանակավոր տեղափոխման ժամանակ խուսափել ՕԳ-ի երկարատև անջատումներից։
- էլեկտրահաղորդման գծերի նորոգման և վերակառուցման ժամանակ հողօգտագործողների գյուղատնտեսական տարածքներով կամ կից անցնելու դեպքում՝ աշխատանքները կատարել հողօգտագործողների համաձայնությամբ։

11.11 Լանդշաֆտ, բարեկարգում.

Շինարարության փուլ: Լանշաֆտի վրա էական վնասակար ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.

- բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները,
- հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները։

Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարել տարածքի բարեկարգում.

- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից և հնարավորինս բերել նախկին տեսքի,
- շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից,
- կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման աշխատանքներ,
- Արևակայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվելու է 2 մ բարձրության մետաղական ցանկապատով ։

Ենթակայանի տարածքի որոշ հատվածներ բետոնապատվելու են կամ լցվելու են մանրախճով։

Ելնելով գործունեության բնույթից՝ հրդեհավտանգությունն ապահովելու նպատակով, տարածքի ազատ հատվածներում կանաչապատման աշխատանքներ չեն կատարվելու։

12. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը (Մոնիթորինգ).

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող գործընթաց է, գործընթացում մթնոլորտային օդում, ջրային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված։

Այդ նպատակով նախատեսվում է.

- շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառման հսկողություն։
- Համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում՝

շինարարարական և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանման նպատակով։

- Բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով։
- Գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով։
- Մինչև գործունեության սկսելը կատարել տարածքի մոնիթորինգ՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման նպատակով։
- Տրանսպորտային միջոցների երթևեկության վերահսկում՝ դաշտային տարածքներում վերջիններիս տեղաշարժը բացառելու և վերահսկելու նպատակով։
- Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումների իրականացում՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով։
- Անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով մշտական մոնիթորինգի իրականացում։
- Շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանման վերահսկողություն։
- Բարեկարգման աշխատանքների կատարման ապահովում, վերահսկում։
- Էլեկտրահաղորդման գծերի վերահսկումն իրականացնել էլեկտրակայանքներն սպասարկող մասնագիտացված սպասարկող անձնակազմի միջոցով՝ ապահովելով վերջիններիս անվտանգության պայմանները։

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույն։

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսվում է ծախսել տարեկան 1.000 000 ՀՀ դրամ։

13. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան.

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1	Շինարարությանփուլ Օդային ավազան	Օդային ավազան արտանետումները մեղմելու նպտակով նախատեսվում է. -օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս, - ջրցանը կատարել ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին, - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով, - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով, - ցանկապատել շինարարական հրապարակը նախագծին համապատասխան,	Կապալառու	«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ

		- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով՝ համայնքապետարանի համաձայնությամբ։ -շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում։ **Շահագործման փուլում** օդային ավազանի վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում։		
2	**Հողային ռեսուրսներ**	Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է. - հողի բերրի շերտի հանում և պահում համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան, - բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկել միջոցներ, որոնք բացառեն բուսահողի որակական հատկանիշների վատթարացումը, - նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը մաքրել խոշոր քարերից, թփերից, կոճղերից, - հողի բերրի շերտը օգտահանել, հեռացնել ապարները, պահեստավորել առանձին,	**Կապալառու**	«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ

		- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկել խոտաբույսերով կամ հողաթմբերի ամրացնել, ծածկել անջրթափանց թաղանթով, - մալուխագծի անցկացման աշխատանքների ժամանակ հանվող հողային զանգվածը կուտակել անմիջական հորատանցքերի հարևանությամբ՝ ծածկված վիճակում, - արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կուտակել տարածքում՝ ծածկելով անջրթափանց թաղանթով, - հողային զանգվածն օգտագործել տեղում՝ հետլցման, բուսաշերտը տարածքի բարեկարգման համար, - ավելցուկային գրունտը տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր, - շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները, - շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան կայանել միայն շինհրապարակում, - այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրել մանրախիճ, - մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված մանրախիճը տեղափոխվելու է		

		համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով, - շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կատարել գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում: Շահագործման փուլում հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է. -տարածքների մաքրում և վերականգնում, ՕԳ-ի կառուցման ավարտից հետո նախատեսվում է. - Գործունեության իրականացման համար տրամադրվող հողերի վերականգնում:		
3	**Ջրային ռեսուրսներ**	Ջրային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է. - գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շշերով), - աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով կդեղադրվեն համապատասխան տարողության ջրի բաքեր, - շինհրապարակում կտեղադրվի պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով, - պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,	**Կապալառու**	**«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ**

		- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության, - ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար կօգտագործվի տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործել պարզարանի ջուրը, - շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարան, - շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախատնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի, - բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և հողածածկը և ասֆալտածածկը չվնասելու համար։		

		Կեղտաջրեր. **Կեղտաջրեր.** Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և շինարարական կան հոսքաջրերի շրջակա միջավայրի աղտոտման կանխարգման նպատակով. - կտեղադրվի բիոզուգարան, - բիոզուգարանների մաքրումը կատարել լիցենզիա ունեցող մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով։ **Շահագործման փուլում.** Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է. - աշխատողների համար խմելու ջուրը բերել պատրաստի վիճակում՝ շշերով, - աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները կհոգան սանիտարական հանգույցից (բիոզուգարան), - բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով։ Արևային կայանի վահանակների մաքրում կամ լվացում չի նախատեսվում, խիստ անհրաժեշտության դեպքում այն կիրականացվի չոր եղանակով։		
4.	**Կենսաբազմազանություն**	Արևային կայանի կառուցման տարածքում կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է. - բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելիս առաջնորդվել	**Կապալառու**	**«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ**

		Կառավարության 31.07.2014 թվականի N 781 որոշման դրույթներով, - գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը պետք է տեղեկացնի համապատասխան պատասխանատու գերատեսչություններին, - բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելիս առաջնորդվել Կառավարության 31.07.2014 թվականի N 781 որոշման դրույթներով, -շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար։ - խախտված հողային զանգվածի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով, - շինարարական աշխատանքներն իրականացնել միայն ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու, բնականոն վարքին չխանգարելու համար։ **Շահագործման փուլ.** Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է.		

		- հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով, - խախտված հողաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով, - ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանականգնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով:		
5.	**Թափոններ**	Շինարարության փուլում առաջանալու են թափոններ, որի համար նախատեսվում է. - խուսափել տարածքում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից, - նյութերի մնացորդները(մետաղական մասեր, մետաղալարեր) հավաքել հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո տեղափոխել Կապալառու կազմակերպության կողմից, հանձնել համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար, -շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, հավաքել պարկերի մեջ և տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,	**Կապալառու**	**«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ**

		-ավելցուկային հողային գրունտը տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր, - շինհրապարակում կենցաղային աղբը հավաքել համապատասխան աղբարկղերում և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ, -շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին։ **Շահագործման փուլ.** Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է. - կառուցել յուղընդունիչ-յուղահավաք համապատասխան տարողությամբ, - հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնել համապատասխան վերամշակող կազմակերպություններին, - հալոգեններ, դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնել մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝		

		պայմանագրային հիմունքներով, - հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառել spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը, -ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնել ասֆալտապատող ընկերություններին, - յուղերով աղտոտված ավազը կամ մանրախիճը հանձնել մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով, - սև և գունավոր մետաղի ջարդոնը հանձնել մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով։ Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված վահանակներ և այլ խոտանված մասեր, որոնք կուտակվելու են տարածքում՝ փակ պահեստային շենքում, մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը։ Արևային կայանի ներկրված վահանակներն ունեն օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված վահանակները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով։ Մնացած ժամանակաշրջանում շարքից դուրս եկած վահանակները կկուտակվեն պահեստարանում՝ մինչև դրանց արտահանման կամ վերամշակման		

		հնարավորությունների ստեղծումը:		
6.	**Արտակարգ իրավիճակներ**	Արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է. - պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային, կրակմարիչներով, - աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելուն, - տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով, - հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և կպահվեն հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, -օդային գծերը կառուցել ապահովելով 6մ՝ եզրային հաղորդալարերի հեռավորությունն ըստ հորիզոնականի, դրանց առավելագույն շեղման դեպքում, մինչև արտադրական, պահեստային, վարչակենցաղային և հանրային շենքերի ու կառույցների մերձավոր մասերը, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել: **Շահագործման փուլ.** -Արևակայանը և ենթակայանն ապահովված են լինելու հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ավտոմատ կառավարման համակարգով, հրդեհաշիջման միջոցներով՝	**Կապալառու**	**«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ**

		հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով, արտաքին լուսավորության և տեսախսկման սարքերով, - պարբերաբար ստուգել աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը, - գործունեության տարածքում փակցնել արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, - անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով նախատեսվում է, մշտական մոնիթորինգ, հերթափոխային գրաֆիկով՝ 4 աշխատողի միջոցով։ Օդային գիծ. - հենարանի շուրջ՝ 2 մ շառավղով խոտի և թփուտների մաքրում, - ՕԳի անվտանգության գոտու պահպանում՝ 20մ, - ՕԳ-ի ուղեգծի երկայնքով երթանցի և դրանց մերձենալու համար տնկիներից, կոճղերից, քարերից և այլնից մաքրված հողի շերտի ապահովում՝ ոչ պակաս 2,5 մ լայնությամբ, - ցանկացած եղանակի ժամանակ ՕԳ-ին մոտենալու համար ճանապարհի ապահովում՝ ոչ ավելի ՕԳ ուղեգծից 0,5 կմ-ից։		

7.	Աղմուկ և թրթռում	Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է. - շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում, - պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները, -ՕԳ-ի և դրանց տարրերի անցկացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաճոպանների պարը, թրթռումը։ **Շահագործման փուլ.** - արևակայանի, ենթակայանի և դրանց տարրերի իրականացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաճոպանների պարը, թրթռումը, - Արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա։	Կապալառու	«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ

8.	**Պատմամշակութային հուշարձաններ**	Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:	**Կապալառու**	**«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ**
9.	**Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն**	Գործունեության իրականացման շինարարության ընթացքում հնարավոր են աշխատողների հետ կապված վնասվածքներ, որի համար նախատեսվում է. - պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարականկենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, -շինարարության ամբողջ ընթացքում անհրաժեշտ է ապահովել բժշկական միջոցների բավարար քանակը, ջրի և սննդամթերքի որակի, դրանց տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը,	**Կապալառու**	**«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ**

		- շին.հրապարակն ապահովվել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, - աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ), -աշխատողներին ապահովել էլեկտրապաշտպանության միջոցներով, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ռիսկերի ազդեցությունը կանխարգելելու համար, իսկ դրա անհնարինության դեպքում՝ դադարեցնել աշխատանքը, - շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ, տեղեկատվական, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ, - շինհրապարակն ապահովել հակահրդեհային միջոցներով, լուսավորության սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, -վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործունեության վայրում խոտանված սարքերի կուտակումները, -վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները, մի քանի շինարարական տեխնիկական միջոցների աշխատանքը մեկ		

		տեղամասում, - նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - մալուխային գծերի տեղադրումը կատարել բացառելով մալուխային գծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը, - մալուխային և օդային գծերի տեղադրումը կատարել բացառելով մալուխային գծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել: Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոնները: **Շահագործման փուլում** Մարդու առողջության պահպանման նպատակով նախատեսվում է. -ապահովել առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով, - կիրառվող հաղորդալարերի և մալուխների		

		թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանի անցկացման եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին, - օդային գծի բոլոր հենարանները համարակալեմ, նշագրել և գունավորվել՝ ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1943-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան, - էլեկտրահաղորդման հենասյունների վրա տեղադրել էլեկտրական լարման մասին համապատասխան նշագրում՝ մարդու առողջության և անվտանգության պահպանման նպատակով, -պահպանել լարերի ամենացածր կետից մինչև գետնին ամենափոքր հեռավորությունը (ջուր, ճանապարհ, հուն)՝ գծի տակ գտնվող մարդկանց և տրանսպորտային միջոցների անվտանգությունն ապահովվելու նպատակով, - պահպանել թռիչքներում միջֆազային հեռավորությունները, տեխնիկական կանոնակարգի պահանջները՝ հաղորդալարի եզրաչափը հողից, -Էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի, Արևակայանի կառուցման և շահագործման		

		աշխատանքները պետք է կատարել ՀՀ կառավարության 21 ապրիլի 2023 թվականի «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 583-Ն որոշման պահանջներին համապատասխան:		
10.	**Սոցիալական գործոններ.**	Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 100 մարդու համար: • ՕԳ-ի ուղեգծի անցկացման ժամանակ բացառել գյուղացիներին պատկանող հողատարածքներում գյուղատնտեսական աշխատանքների կատարման խոչընդոտումը: Շահագործման փուլում ընդգրկվելու են 4 աշխատողներ՝ մոնիթորինգ իրականացնելու նպատակով՝ հերթափոխային գրաֆիկով: • ՕԳ-ի ժամանակավոր տեղափոխման ժամանակ խուսափել ՕԳ-ի երկարատև անջատումներից: • Էլեկտրահաղորդման գծերի նորոգման և վերակառուցման ժամանակ հողօգտագործողների գյուղատնտեսական տարածքներով կամ կից անցնելու դեպքում՝ աշխատանքները կատարել հողօգտագործողների համաձայնությամբ:	**Կապալառու**	**«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ**
11.	**Բարեկարգում, լանդշաֆտ**	Լանշաֆտի վրա էական վնասակար ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է. - բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները,	**Կապալառու**	**«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ**

		-հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները։ **Բարեկարգում.** շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում. - շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերել հնարավորինս նախկին տեսքի, - շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից, - կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման աշխատանքներ, - Արևակայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվել 2 մ բարձրության մետաղական ցանկապատով։ Ենթակայանի տարածքի որոշ հատվածներ բետոնապատվելու են կամ լցվելու են մանրախճով։ Ելնելով գործունեության բնույթից հրդեհավտանգությունն ապահովելու նպատակով, տարածքի ազատ հատվածներում կանաչապատման աշխատանքներ չեն կատարվելու։		

14. Մոնիթորիգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր).

Գործողություններ Շինարարության փուլ	Մոնիթորինգի վայրը, պարբերականությունը (ժամանակամիջոցը),	Մոնիթորինգի եղանակը, ձևը	Մոնիթորինգի Պատասխանատու Վերահսկող
1.Օդային ավազան արտանետումները մեղմում՝ օդի աղտոտումը կանխելու նպատակով (փոշի, ծխագազեր)	Շինհրապարակում Ամենօրյա Շաբաթը 1 անգամ	Տեսողական ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում չափագրում՝ համապատասխան մասնագետի կողմից	Կապալառու «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ
2.Հողային ռեսուրսների մոնիթորինգ՝ հողի աղտոտումը կանխելու նպատակով	Շաբաթը մեկ անգամ	Շինհրապարակ, գործունեության տարածք, ճանապարհներ, հարակից տարածքներ տեսողական ուսումնասիրություն	Կապալառու «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ
3.Կենսաբազմազանության մոնիթորինգ	Գործունեության իրականացման սկզբում	Տեսողական, , անհրաժեշտության դեպքում մասնագիտական ուսումնասիրություն	Կապալառու «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ
4.Շինարարական նյութերի ներկրման և թափոնների տեղափոխում, կենցաղային աղբի հեռացում	Գործունեության տարածքից, շինհրապարակից: Չպլանավորված ստուգումներ :	Տեսողական ուսումնասիրություն:	Կապալառու «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ
5.Արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության վերահսկում	Գործունեության տարածքում, շինհրապարակում՝ Պարբերաբար	Տեսողական ուսումնասիրություններ, անվտանգության կանոնների պահպանում	Կապալառու «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմին

6.Աղմուկի մակարդակի տատանումներ	Շինհրապարակում պարբերաբար	Աղմկաչափ	**Կապալառու**
7. Մարդու առողջություն և անվտանգություն	Շինարարության ընթացքում, պարբերաբար	Շինարարության տարածքում, հարցումների իրականացում, համապատասխան ցուցատախտակների տեղադրում	**Կապալառու «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմին**
8.Տարածքի բարեկարգում	Շինարարության ավարտից հետո	Տեսողական ուսումնասիրություն	**Կապալառու «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ**
Շահագործման փուլ			
1.Կենսաբազմազանության ուսումնասիրություններ՝ տարածքում կենսաբազմազանության հնարավոր փոփոխությունները դիտարկելու նպատակով:	Հինգ տարին մեկ անգամ՝ գործունեության տարածք	Մասնագիտական ուսումնասիրություն	**«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ**
2.Արտակարգ իրավիճակների հսկողություն՝ վթարային իրավիճակների նվազեցման նպատակով	Արևակայանի և Ենթակայանի տարածքում համապատասխան հակահրդեհային միջոցների առկայություն: Անվտանգության համակարգերի արդյունքների վերահսկում:	Ստուգումներ Մշտական մոնիթորիգ՝ աշխատողների միջոցով:	**«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին**
3.Էլեկտրահաղորդման գծերի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվտանգության	Անվտանգության գոտու պահպանում՝ Օդային գծերի	Տեսողական ստուգումներ, համապատասխան ակտերի կազմում՝ ՀՀ օրենսդրության	**«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ**

զոտու պահպանում	ուղեգծերի ուղղությամբ:	պահանջներին համապատասխան Պարբերաբար	**Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին**
4.**Սոցիալական**	Գործունեության իրականացման ընթացքում	Կանոնավոր սոցիալական պարտավորությունների կատարում՝ ամրագրված համայնքի հետ կնքված պայմանագրում:	**«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ**

15. Հանրային քննարկումներ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի և ՀՀ կառավարության 2343-Ն որոշմամբ սահմանված պահանջների՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանևան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող գործունեության իրականացման հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրությունը համաձայն ընթացակարգի՝ իր կարծիքը և առաջարկությունները կարող էր ներկայացնել գրավոր՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Հանրային քննարկմանը ներկա էին Վարդենիս համայնքի, գործունեություն իրականացնող ընկերության ներկայացուցիչները, բնակավայրի վարչական ղեկավարը, բնակիչները: Հանրային քննարկմանը ներկայացվել է նախատեսվող գործունեության նախագծային լուծումները և գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, դրանց մեղմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները: Հանրային քննարկման ընթացքում Վանևան բնակավայրի բնակիչների կողմից հարց բարձրացվեց գյուղին սոցիալական և ֆինասական աջակցության վերաբերյալ, մասնավորապես կարևորելով, որ ֆինանսական աջակցությունը լինի բնակավայրին՝ գյուղի բնակիչների սոցիալ-տնտեսական խնդիրները մեղմացնելու նպատակով:

Հաշվետվությունում ներառվել են հանրային քննարկման ընթացքում բարձրացված բոլոր դիտարկումների և հարցադրումների պատասխանները: Քննարկման արդյունքում նախագծի վերաբերյալ Օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի ավագանու կողմից տրվել է նախնական համաձայնություն գործունեության իրականացման վերաբերյալ: Հավելված 9, 10:

16.Բողոքների ընթացակարգ

Ընկերությունում կներդրվի բողոքների ուսումնասիրման ընթացակարգ՝ գործունեության իրականացման ընթացքում առաջացած շեղումների. օդային ավազան արտանետումների, հողային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև գյուղացիների հողագործական աշխատանքներին խոչընդոտելու վերաբերյալ բողոքներին արձագանքելու, շեղումները, դրանց պատճառները բացահայտելու, ժամանակին արձագանքելու և թերությունները վերացնելու նպատակով:

17.Նախատեսվող գործունեության իրականացման նպատակահարմարությունը, հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.

Համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարում Արևային էներգիան օգտագործվելու է տնտեսության տարբեր բնագավառներում՝ ջեռուցման, լուսավորության, տաք ջրի, ավտոտրանսպորտի, վառելիքի արտադրության, գյուղատնտեսության և այլ ոլորտներում: Արևային և քամու վերականգնվող էներգիան այսօր աշխարհում էլեկտրաէներգիայի ամենաարագ աճող աղբյուրներն է, և տեխնոլոգիապես ավելի առաջադեմ է, տնտեսապես մատչելի: Սա պայմանավորված է մի շարք դրական գործոններով, ինչպիսիք են վառելիքի ծախսերի, ջերմոցային գազերի և այլ աղտոտող թափոնների արտանետումների կրճատումը: 2011 թվականին Էներգետիկայի միջազգային գործակալության զեկույցում նշվել է, որ արևային էներգիայի տեխնոլոգիաները, ինչպիսիք են ֆոտոգալվանները, արևային տաք ջուրը և կենտրոնացված արևային էներգիան, կարող են ապահովել աշխարհի էներգիայի մեկ երրորդը մինչև 2060 թվականը, սահմանափակել կլիմայի փոփոխությունը և անցնել վերականգնվող էներգիայի: Արեգակից ստացված էներգիան կարող է առանցքային դեր ունենալ համաշխարհային տնտեսությունը ապաածխաթթվայնացնելու գործընթացում և էներգախնայողության բարելավման ոլորտում:

Համաձայն Էներգետիկ Ember վերլուծական կենտրոնի զեկույցի՝ 2022 թվականին քամու և արևի արտադրության աճը ծածկել է էլեկտրաէներգիայի համաշխարհային պահանջարկի աճի 80%-ը: Քամին և արևը 2022 թվականին հասել են համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության ռեկորդային 12%-ի՝ մեկ տարի առաջվա 10%-ի դիմաց:

Հայաստանում ջերմոցային գազերի արտանետման ամենամեծ մասնաբաժինը Էներգետիկայի ոլորտինն է, որը CO_2-ի ընդհանուր արտանետումների մեջ կազմում է 64%: ՀՀ-ում 1 կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրության համար առաջանում է մոտավորապես 0.4 կգ ածխածնի երկօքսիդ: Երբ տեղադրում ենք արևային կայաններ կամ իրականացնում ենք ջերմամեկուսացման աշխատանքներ, կանխում ենք ածխածնի երկօքսիդի արտանետումը մթնոլորտ: Վերականգնվող էներգետիկայի զարգացումը կարևորվում է ոչ միայն էներգետիկայի ոլորտի դիվերսիֆիկացիայի, այլ նաև ջերմոցային գազերի արտանետումների նվազման տեսանկյունից: Արևային էներգիայի օգտագործումը կնպաստի Հայաստանի հանրապետության էներգետիկ անվտանգության ավելացմանը, ապավինելով բնածին, անսպառ և հիմնականում ներմուծումից անկախ ռեսուրսին, կբարձրացնի էներգետիկ համակարգի կայունությունը, կախվածությունը ածխաջրածիններով հարուստ վառելիքից, կնվազեցնի շրջակա միջավայրի աղտոտումը:

Արևային էներգիայի օգտագործումը կնպաստի Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ավելացմանը, ապավինելով բնածին, անսպառ և հիմնականում ներմուծումից անկախ ռեսուրսին, կբարձրացնի էներգետիկ համակարգի կայունությունը, կախվածությունը ածխաջրածինների պաշարներով հարուստ վառելիքից, կնվազեցնի շրջակա միջավայրի աղտոտումը: ՀՀ կառավարությունը խթանում է արևային և այլ ալյընտրանքային կայանների կառուցման և հետագա զարգացման ներդրումային ծրագրերը՝ հատկապես չգազիֆիկացված համայնքներում: Արևային էլեկտրաէներգիայի ստացումը բավականին նպաստավոր պայմաններ է ստեղծում, թե շրջակա միջավայրի պահպանման, և

թե մարդկության կայուն զարգացման համար, հատկապես այն դեպքում երբ հանրապետությունը հարուստ է արևային էներգիայի գոտիներով/ Globalsolaratlas.info/:

2023թ. հոկտեմբերի 26-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թ. հունվարի 14–ի X 48-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ վերականգնվող էներգետիկայի հզորությունը մինչև 2040թ.-ը կհասցվի 2000 ՄՎտ-ի, որից 1500 ՄՎտ-ն արևային, իսկ 500 ՄՎտ-ն հողմային էներգետիկայի հաշվին:

«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊ ընկերության կողմից կառուցվող արևակայանը համահունչ է ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի «ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ 2022-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ, ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ 2022-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ (2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐ) ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾՐԱԳԻՐ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» N 398-Լ որոշման պահանջներին:

Վաննան բնակավայրում իրականացված հանրային քննարկման արդյունքում նախագծի վերաբերյալ համայնքի ավագանին տվել է իր նախնական համաձայնությունը, որն էլ հիմնավորում է նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանությունը համայնքի հեռանկարային զարգացման հիմնադրույթային փաստաթղթերին և համայնքի հեռանկարային զարգացմանը:

Հաշվետվությունում ներառված՝ ԲՍԿՊ-ում և մոնիթորինգի պլանում առաջարկվող բոլոր մեղմող միջոցառումների իրականացվելու դեպքում արևային էլեկտրակայանը կարող է կառուցվել և շահագործվել առանց շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա զգալի բացասական ազդեցության: Այս միջոցառումները միտված են կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականության բարձրացմանը:

18. Փակման փուլ.

Ընկերության կողմից գործունեության հնարավոր դադարեցման դեպքում վերջինիս կողմից նախատեսվում են գործողությունների պլան, որը ներառում է.

- ✓ սարքավորումների, արևային պանելների, էլեկտրասյուների ապամոնտաժում,
- ✓ արևակայանի, ենթակայանի և օդային ուղեգծի տարածքների կարգաբերում, նախկին տեսքի բերում:

Գործողությունները կատարվելու է համայնքի վերահսկողությամբ:

Փակման փուլի ազդեցություն. Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև աշխարհի զարգացած երկրներում, դեռևս գոյություն չունի արևային կայանների սարքավորումների, մասնավորապես որպես թափոնատեսակ՝ ֆոտոէլեմենտներ պարունակող պանելների և այլ ուղեկցող մասերի պահպանման, տեղակայման լուծումները:

Քանի որ արևային կայանի վահանակները (батарейка) պատրաստվում են տարբեր ֆոտոէլեմենտներ պարունակող (ապակի, պլաստիկ) նյութերից, որոնք իրենց մեջ

պարունակում են (կապար, քրոմ, կադիում, սիլիցիում և այլն), ուստի դրանց ուտիլիզացիան և վերամշակումը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության համար հրատապ լուծում պահանջող խնդիր, որի լուծումը պետք է տրվի ՀՀ կառավարության կողմից մշակված համապատասխան օրենսդրության, ծրագրի հիման վրա, հաշվի առնելով առաջավոր զարգացած երկրների փորձը: **Հատկապես առանց կադմիումի բարակ թաղանթով արևային մոդուլների ստեղծման աշխատանքներն արդեն հաջողությամբ ընթանում են առաջավոր զարգացած երկրներում:**

Միջոցառումներ. Մինչև համապատասխան ռազմավարության մշակումը ընկերությունը նախատեսում է կիրառել հետևյալ հնարավոր տարբերակները.

-հնարավորության դեպքում վերանորոգել և կրկնակի օգտագործել վթարված մասերը,

- ֆոտոէլեմենտներ պարունակող վահանակները չթաղել կամ չհավաքել աղբավայրերում, բաց վիճակում,

- վաճառել թափոնների հավաքմամբ զբաղվող այլ կազմակերպությունների՝ ներառյալ արտասահմանյան զարգացած երկրներին, որոնք ունեն նման ժամկետանց արևային թափոնների վերամշակման տեխնոլոգիաներ,

- ֆոտոէլեմենտներ պարունակող թափոնները հանձնել էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ հավաքող կետերին կամ կազմակերպություններին (նաև արտասահմանյան)՝ կազմակերպված թափոնների հավաքագրման նպատակով,

- թափոնները հանձնել այն երկրների կազմակերպություններին, որոնք զբաղված են արևային պանելների արտադրությամբ և որոնցից ձեռք են բերվել ֆոտոէլեկտրոնային արևային պանելները:

Գործունեության փակման կամ լուծարման նպատակով Ձեռնարկողի կողմից կատարվելու է պայմանագրերի երկկողմանի դադարեցում, ապամոնտաժվելու են բոլոր սարքավորումները, վահանակները, էլեկտրահաղորդման հենասյուները, էլեկտրահաղորդման գծերը: Ենթակայանի տարածքում կապամոնտաժվեն տրանսֆորմատորները, յուղահեռացման համակարգերը և այլ սարքավորումները: Ապամոնտաժված պիտանի սարքավորումները, վահանակները կվաճառվեն, իսկ խոտանը(ոչ պիտանի մետաղական մասեր, լարեր և այլն) կտեսակավորվի և կհանձնվի համապատասխան մասնագիտական կազմակերպություններին: Բետոնյա մնացորդները կհանձնվեն ճանապարհաշինարարական ընկերություններին: Տարածքը կբարեկարգվի, կբերվի նախկին տեսքի:

Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն։

2.«Աղմուկն աշխատեղերում, բնակելի եվ հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարակն նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի n 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամաններ։

3.Էներգետիկայի միջազգային գործակալությունը (IEA)։ Էներգախնայողության ցուցանիշներ. Քաղաքականության շրջանակ, Էդ. IEA, 2014 թ.։

5.Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային էլեկտրակայաններ։

6.ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման։

7.ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամաներ։

8.ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթ։

9. Վարդենիս խոշորացված համայնքի 2022-2026թթ. զարգացման հնգամյա ծրագիր։

10.ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք /https://armstat.am/։

11.https:/ www.bagramyan.am/Pages/CustomPage/։

12.https://energyagency.am/։

13.Էներգետիկ Ember վերլուծական կենտրոնի զեկույց՝ 2022 թ։

Հավելված 1.

Տարածքի սեփականության իրավունքի վկայականը, Պետ Ռեգիստրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 25 փետրվարի 2025 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Վարդենիս գյուղ Վանեվան 2 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

20.02.2025թ. անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-083-0103-0037
Մակերեսի չափը (հա)՝ 6.5
Նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Էներգետիկայի
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 25022025-05-0082, գաղտնաբառ՝ HBEB4YAPRKST

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՄԱՐՏԻՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 25022025-05-0082, գաղտնաբառ՝ HBEB4YAPRKST

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2024-07-26

«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար	99.110.1401241
Հիմնադրման տարի	2024
Գրանցման ամսաթիվ	2024-07-26
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	54886631
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	04455045
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրի ծածկագիր)	10111241
Էլ. փոստ	harutyun.avagyan90@mail.ru
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ Փ. / Տ / 229 ՎԱՂԱՐՇԱՊԱՏ 1101 ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	+374 98 556561

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն Ազգանուն	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳԻ
Անձնագրային տվյալներ	012127296 2020-09-15 057
Հասցե	Մ. ՍԱՐՅԱՆ Փ. / Տ / 19 ԳԵՂԱԿԵՐՏ 1125 ԳԵՂԱԿԵՐՏ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Էջ 2

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ստ 2024-07-26
«ՍՈԼԱՐ ԱԹԱՐ ԻՔԱ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ **1,000.00**

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով	
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳԻ Անձնագիր հ/հ 012127296 2020-09-15 տրվ. 057 ի կողմից ՀԾՀ 1103900285 Հասցե՝ Մ. ՍԱՐՅԱՆ Փ. / Տ / 19 ԳԵՂԱԿԵՐՏ 1125 ԳԵՂԱԿԵՐՏ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ	2024-07-26	100 %	1000	

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ

Քաղվածքը տրամադրող՝ _____ **Էլմիրա Պետրոսյան Օհանջանի**
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **2024-07-26**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

Հավելված 2

Վարդենիս համայնքի կողմից տրված Ճարտարապետահատակագծային առաջադրանք

Ձև N 1-2

PMFC-3D49-43AE-7DA6

Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am կայքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N ՆԹ-3602-25 05.06.2025թ.

Օբյեկտ **Կառուցում, <<Սոլար Սթար-1>>՝ 5000 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 110/2 x0.8 լարման 7000 կՎԱ հզորությամբ ենթակայանի և պահակատան,**

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

6.5

(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ, ռիսկայնության աստիճանը՝ IV նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Մարզ՝ Գեղարքունիք, համայնք՝ Վարդենիս գյուղ Վանեվան 2 հողամաս, 05-083-0103-0037**

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ / 04455045 / Հայաստան, ԱՐՄԱՎԻՐ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ Փ., Տ 229**

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ 25022025-05-0082**

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **մինչև 05.06.2027թ.**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

Ն Ա Խ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր Ը

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է	Էներգետիկայի, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների (հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
2. (*) Հողամասի չափսերը	6.5 (հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը(հա))
3. Հողամասի առկա վիճակը	(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում քանդման ենթակա) առկայությունը, (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)
4. (*) Տրանսպորտային պայմանները	Վանեվան 2 հողամաս (ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)	

	(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)
6. (*) Կից հողամասեր	(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակույթային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)	Բնության, պատմամշակութային հուշարձանների տարածքներ կամ պահպանական գոտիներ չկան
	(հուշարձանի անվանումը)
8. (*) Հատակագծային սահմանափակումներ	չկան
	(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներարանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ	համաձայն գործող նորմերի ՀՀՇՆ I-3.01.01-08, ՍՆԻՊ III-4-80 պահանջներին համապատասխան, ցանկապատել շինարարական հրապարակը, շենք և շիննությունները ծածկել շինարարության համապատասխան բարձրությամբ անթափաց թաղանթով
	(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)
9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)	համաձայն գործող նորմերի
9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)	համաձայն գործող նորմերի
9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր)	համաձայն նախագծի
	սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)
9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)	
9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%)	
9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով՝ (%))	
9.7 այլ պահանջներ	չկան
10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը	չկան

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները	չկան
12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Պահանջներ՝գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ
12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում	(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2 (*) Էլեկտրամատակարարում	Ըստ նախագծի (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	Ըստ նախագծի (համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	Չի նախատեսվում
12.6. աղբահանություն	Վարդենիսի համայնքապետարանի հետ կնքել պայմանագիր
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	համաձայն աշխատանքային նախագծի (ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	Համաձայն նախագծի : (լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)
15. Շինարարական նյութեր	Համաձայն նախագծի (շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների յուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	Համաձայն գործող նորմերի (արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներներ	Համաձայն գործող նորմերի (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	ՀՀՇՆ IV-11,07,01-2006 շինարարական նորմին
19. Շրջակա միջավայրի պահպանում	ըստ օրենսդրության (շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	Սահմանազատել շին. Հրապարակը (առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	մինչև 05.06.2027թ., նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ, (նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	Պետական համալիր փորձաքնություն, Պարզ փորձաքննություն (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)
23. Միջանկյալ համաձայնեցում	Համաձայնեցնել Վարդենիս համայնքի ղեկավարի հետ (իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)
24. Հասարակական քննարկումներ	Ըստ օրենսդրության (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում

Համայնքի ղեկավարի և ճանապարային դեպարտամենտի հետ

(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 նավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

Ըստ գործող օրենսդրության

(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 նավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահործողի) հետ)

27. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ

Ըստ գործող օրենսդրության

28. Այլ պայմաններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

05.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված 3

«ՀԷՑ»ՓԲԸ-ի կողմից տրված տեխ. պայմանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ՀՀ, ք. Երևան, Արմենակյան 127

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

արտադրող կայանը բաշխման ցանցին միացնելու համար

«05» հունիսի 2025թ.

«S-110/0163/1-Հ»

Արտադրող: «Սոլար Սթար Իքս» ՍՊԸ

Կայանի գտնվելու վայրը: ՀՀ Գեղարքունիքի մարզ, հ. Վարդենիս գ. Վանեվան 2 հողամաս (կադ. ծածկագիր՝ 05-083-0103-0037)

Տեխնիկական պայմանների տրամադրման նպատակը:

1) Արտադրող կայանի միացում բաշխման ցանցին ■

2) Արտադրող կայանի հզորության ավելացում կամ նվազում նախկինում տրված տեխնիկական բնութագրերում նշված հզորությունից. ☐

3) Արտադրող կայանի միացման սխեմայի փոփոխություն ☐

Կայանի հզորությունը: 5000 կՎտ

Միացման կետում լարման մակարդակը: 110 կՎ

Լիցենզիայի համարը: ԼԷ N0807

Կայանի տեսակը – Արևային ֆոտովոլտային

1. Կայանի անվանումը – «Սոլար Սթար-1»
2. Արտադրող կայանի միացման կետը – «Ոսկեհատ» 110 կՎ օդային գծի մոտակա խարսխային հենարան:
3. Դիմումատուի կողմից իրականացվող աշխատանքները
3.1. Կառուցել 110/0.8/0.8 կՎ լարման 7000 կՎԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայան:
3.2. Ենթակայանի միացումը բաշխման ցանցին պետք է իրականացվի սույն տեխնիկական բնութագրի 2-րդ կետով որոշված միացման կետից՝ 110 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի միջոցով /կտրվածքը, երկարությունը և էլեկտրահաղորդման գծի տիպը իրականացնել նախագծով/:
3.3. 110/0.8/0.8 կՎ ենթակայանում տեղադրել 110 կՎ լարման բաժանիչ և անջատիչ (էլեգազային):
3.4. Տեղադրել համապատասխան հզորության փոխակերպիչներ/ինվերտորներ/:
3.5. Փոխակերպիչները պետք է ունենան ռեակտիվ էներգիայի արտադրման, ցանցին միացման կետում լարման կարգավորման հնարավորություն՝ ռեակտիվ հզորության ցանց հաղորդման կամ ցանցից սպառման ռեժիմներում:
3.6. Փոխակերպիչները միացնել ենթակայանի 0.8 կՎ բաշխիչ վահաններին: Բաշխիչ վահանում նախատեսել համապատասխան անվանական հոսանքի ավտոմատ անջատիչներ:
3.7. Սեփական կարիքների համար նախատեսել 0.8/0.4 կՎ ենթակայան (հզորությունը համաձայնեցնել նախագծով):
3.8. 110 կՎ լարման հաղորդման գծի անցկացման ուղեգիծը, ենթակայանի միացման սխեման և եղանակը պետք է համաձայնեցվի ՀԷՑ ՓԲ ընկերության տեխնիկական տնօրենի և համապատասխան շահագրգիռ կազմակերպությունների հետ:
3.9. Կայանի միացումը նախապես համաձայնեցնել «Հաշվարկային կենտրոն» ՓԲ և «ԷԷՀՕ» ՓԲ ընկերությունների հետ:
3.10. Նախատեսել հողանցման կոնտուր՝ բոլոր մետաղական մասերը հողանցել և ապահովել 4 օհմ դիմադրություն:

3.11. Կայանի միացման էլեկտրական մասի շինարարական աշխատանքները իրականացնել համաձայն էլեկտրակայանների, ցանցերի և սպառողների տեխնիկական շահագործման կանոնների համաձայն:

3.12. Կայանի նախագիծը իրականացնել լիցենզավորված կազմակերպության կողմից՝ համաձայն էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոնների (ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 592-Ն որոշման):

3.13. Էլեկտրական էներգիայի հաշվառումը իրականացնել Հայաստանի Հանրապետության Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններին համապատասխան՝ հաշվառքի սարքերը (ԲԷԱՀ-ին միացման հնարավորությամբ), տեղադրելով սահմանազատման կետում:

3.14. Նախատեսել և գործարկել հաճախականության բարձրացումից բաժանարար ավտոմատիկա, որի դրվածքները նոր միացվող կայանի համար պետք է հաշվարկվեն և տրամադրվեն ԷԷՀՕ ՓԲ ընկերության կողմից:

3.15. Անհրաժեշտ է ապահովել Համակարգի օպերատորի կողմից կայանը հեռակառավարման սարքավորման միջոցով էլեկտրական ցանցից անջատման հնարավորության պահանջը:

3.16. Ապահովել արևային կայանի կողմից կարման կարգավորման պահանջը:

3.17. Շին-մոնտաժային աշխատանքներ իրականացնել լիցենզավորված կազմակերպության կողմից էլեկտրատեղակայման կանոններին և կարգավորող տեխնիկական փաստաթղթերին համապատասխան:

3.18. Նախքան կայանի միացնելը՝ տրամադրել կատարված էլեկտրասարքավորումների փորձարկման արձանագրությունները, աշխատանքների կատարման ակտերը և տեղադրող ընկերության լիցենզիաները:

3.19. Սնուցումը կիրականացվի քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված գործարկման եզրակացության, «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրված լարման կարգադրության առկայության դեպքում:

3.20. Տեխնիկական պայմանների կատարման ժամկետը մինչև Արտադրության լիցենզիայով ամրագրված՝ կայանի կառուցման ժամանակահատվածը:

«ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱՄԱՁԱՅՆՎԱԾ»
Տեխնիկական տնօրեն Դավիթ Գրիգորյան

_____ (ստորագրություն, կնիք)

Հավելված 4

Էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության

ԼԻՑԵՆԶԻԱ

ԼԷ № 0807 (7 էջից)

Տրվում է «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ մինչև 2047 թվականի մարտի 27-ը գործողության ժամկետով,
Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի մարտի 26-ի №89-Ա որոշմամբ

Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի նախագահ՝

Մ. Մեսրոպյան

U.S.

« 26 » մարտի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ – 2025թ.

Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի մարտի 26-ի №89-Ա որոշմամբ

«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0807 լիցենզիայի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ (ՎԱՅՐԸ)

1. Սույն լիցենզիան ուժի մեջ է մտնում 2025 թվականի մարտի 27-ից:

2. Սույն լիցենզիան գործում է մինչև 2047 թվականի մարտի 27-ը, որից՝

1) մինչև 2027 թվականի մարտի 27-ը կառուցման ժամանակահատվածն է,

2) մինչև 2047 թվականի մարտի 27-ը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածը:

3. Սույն լիցենզիայի՝ սույն գլխով նախատեսված ժամանակահատվածի (ժամկետի) երկարաձգման անհրաժեշտության դեպքում «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Լիցենզավորված անձ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

4. Լիցենզավորված գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը (գործունեության վայրը) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական տարածք (գյուղ Վանեվան):

2. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է սույն լիցենզիայով սահմանված ժամկետում (ժամանակահատվածում) կառուցել 5000 կՎտ տեղակայվող հզորությամբ «Սոլար Սթար-1» արևային էլեկտրակայանը (այսուհետ՝ Կայան), ինչպես նաև իրավունք է տրվում արտադրել էլեկտրական էներգիա՝ առանց «Էներգետիկայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի:

6. Լիցենզավորված անձին, առանց Օրենքով սահմանված էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի, իրավունք է տրվում՝

1) մեծածախ շուկայում վաճառել կամ արտահանել իր արտադրած էլեկտրական էներգիան (հզորությունը)՝ շուկայի կանոնների համաձայն,

2) էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում գնել էլեկտրական էներգիա (հզորություն), եթե սեփական արտադրության էլեկտրական էներգիայով չի կարողանում կատարել իր պայմանագրային պարտականությունները:

7. Լիցենզավորված անձն էլեկտրական էներգիան կարող է օգտագործել նաև սեփական կարիքների համար՝ շուկայի կանոնների համաձայն:

8. Կայանի կառուցման ավարտից հետո դրա փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը կամրագրվի սույն լիցենզիայում:

9. Կայանի համար հանձնաժողովը սակագին չի սահմանում:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի Օրենքի, այլ օրենքների, սույն լիցենզիայի, ցանցային կանոնների, առևտրային կանոնների, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոնների համաձայն էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող անձի կողմից տրված՝ Կայանից էլեկտրական էներգիայի՝ էլեկտրական ցանց առաքման դադարեցման կամ սահմանափակման վերաբերյալ կարգադրությունները, ինչպես նաև ապահովել Կայանը էլեկտրական ցանցից հեռակառավարման սարքավորման միջոցով անջատելու հնարավորություն:

12. Լիցենզավորված անձի և էլեկտրաէներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց, ինչպես նաև սպառողների միջև կնքված պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին և (կամ) պարտադիր պայմաններին:

13. Լիցենզավորված անձը շուկայի օպերատորի հաշվառման է ներկայացնում մեծածախ շուկայում կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանում նախատեսող պայմանագրերը՝ համաձայն շուկայի կանոնների:

14. Լիցենզավորված անձի կողմից Կայանի կառուցումը և շահագործումն իրականացվում է համաձայն Կայանի նախագծային փաստաթղթերով նախատեսված սխեմայի՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

15. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2025 թվականի նոյեմբերի 27-ը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով: Եթե օրենսդրությամբ առկա չէ Կայանի նախագծային աշխատանքներ իրականացնելու պահանջ՝ ապա Հանձնաժողով է ներկայացվում իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան հիմնավորումներ:

16. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև սույն լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը:

17. Լիցենզավորված անձը (10 ՄՎտ և ավելի տեղակայված հզորությամբ Կայանների դեպքում) պարտավոր է կատարել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի հրահանգները՝ համաձայն ցանցային կանոնների:

18. Սույն լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, իսկ դրանով ամրագրված էլեկտրական էներգիայի արտադրության գործառույթը որևէ ձևով փոխանցվել այլ անձի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

19. Սույն լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ և այդ գործունեության մեջ ներգրավված գույքի հասանելիությունը Հանձնաժողովի ներկայացուցիչների համար:

21. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի սույն լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը, իսկ լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով ներկայացնել լիցենզավորված գործունեության վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն, ինչպես նաև պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին 10 օրվա ընթացքում, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված անձի և շուկայի մասնակիցների կողմից միմյանց, ինչպես նաև Հանձնաժողով ներկայացվող տեղեկությունը (փաստաթուղթը) հրապարակային է, եթե այն օրենքի համաձայն չի համարվում գաղտնի:

26. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են սույն լիցենզիայի պայմանների խախտումների կամ կարող են դառնալ սույն լիցենզիայի պայմանների խախտումների անմիջական պատճառ:

27. Սույն լիցենզիայի պայմաններով նախատեսված իրազեկումը, այդ թվում փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

28. Լիցենզավորված գործունեության վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

29. Հանձնաժողովը օրենքներով և դրանց հիման վրա ընդունված՝ իր իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով, Լիցենզավորված անձի գործունեությունը Օրենքին, Հանձնաժողովի իրավական ակտերին և լիցենզիայի պայմաններին համապատասխանության ստուգման, ինչպես նաև Հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների և տեղեկատվության հավաստիության, գնահատման համար իրականացնում է Լիցենզավորված անձի գործունեության մոնիտորինգ:

30. Հանձնաժողովի ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք՝ Հանձնաժողովի սահմանած կարգով:

«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

(ընկերության անվանումը)

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Վաղարշապատ, Ա. Մանուկյան փողոց, 229

(գտնվելու վայրը)

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

31. Լիցենզավորված անձի կողմից Օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունված իրավական ակտերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է կիրառելու Օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցները, վերականգնելու մինչև խախտումը եղած դրությունը, կատարելու դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալ դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով սահմանված առանձնահատկությունները:

32. Լիցենզավորված անձը սույն լիցենզիայի պայմանների 31-րդ կետում նշված խախտումների համար պատասխանատվություն չի կրում, եթե դրանք հետևանք են ֆորս մաժորի:

33. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են Օրենքով և օրենսդրությամբ:

6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

34. Սույն լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

35. Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի փոփոխությունները կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են օրենքների և նորմատիվ իրավական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար:

36. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15 օրյա ժամկետում լիցենզիայի վերաձևակերպման հայտ ներկայացնել Հանձնաժողով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

37. Սույն լիցենզիայի պայմաններում հասկացություններն ունեն Օրենքով և շուկայի կանոններով սահմանված նշանակությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-15) 52-85-21

«26» մարտի 2025 թ.

№ ԱՍ/34.1-Մ2-4/1279-2025

«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ-ի
գնօրեն Հ. Ավագյանին

Հարգելի պարոն Ավագյան,

Ձեզ է ուղարկվում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի մարտի 26-ի՝ «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Սոլար Սթար-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №89-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ 2 էջ:

26.03.2025

X

ԱՐԳՈՒՐ ԱԱՖԱՐՅԱՆ

Ա. Սաֆարյան

Կատարող՝ Հ. Հովհաննիսյան ☎ (015) 58.08-08 (313)

600.0089.26.03.25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2025 թվականի №89-Ա

«ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ-1» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի մարտի 6-ի հայտը, ի լրումն մարտի 13-ի և մարտի 18-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել «Սոլար Սթար-1» արևային էլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական տարածք (գյուղ Վանեվան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2047 թվականի մարտի 27-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2027 թվականի մարտի 27-ը, առանց «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի:
2. Հաստատել «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Սոլար Սթար-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ պարտավոր է «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» և «ա2» կետերի համաձայն՝ արտադրության լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում նախապես, այդ մասին իրեն հայտնի չլինելու դեպքում տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, իսկ արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում) այդ մասին տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ ներկայացնելով փոփոխության հիմնավորումները և փոփոխված փաստաթղթերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մարտի 27-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆ**

ք. Երևան
26 մարտի 2025 թ.

Հավելված 5

Արևակայանի հատակագիծը՝ WGS կոորդինատներով,վահանակների տեղակայման հատակագիծ



	X	Y
1	8557126.46	4449959.36
2	8557297.14	4449966.77
3	8557333.44	4449895.71
4	8557246.61	4449574.5
5	8557154.19	4449601.39
6	8557121.02	4449693.34
7	8557111.7	4449809.81
8	8557114.82	4449896.65


Կոորդինատային հատակագիծ
N
S
X Y =8557297.140, 4449966.770
X Y =8557128.480, 4449959.380
X Y =8557114.820, 4449898.650
X Y =8557333.440, 4449895.710
X Y =8557111.700, 4449809.810
X Y =8557121.020, 4449693.340
X Y =8557154.190, 4449601.390
X Y =8557246.610, 4449574.500
«ՍՈՒԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ
5.000 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղաբաշխում
ՀՀ, Մարզ Գեղարքունիք, համայնք Կարդենիս գյուղ Կանեվան 2 հողամաս
Անուն
Ստեղ.
Նկ.
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Հ. ՏՈՒԱԳԵԱՆ
Ա. ԳՈՒԳՈՒԱ
Նիրարարական նաս
Կոորդինատային հատակագիծ
Վերանայում
Մասշտաբ
Մերք
Մերքեր
02
1:2000
04
10
ecoVille
energy
Powered by Sun


Վահանակների տեղակալման չափադրական հատակագիծ
N
S
Ե/կ 110/2x0.8կՎ 7000կՎԱ
Մուտք
Պահակակետ
0.40
0.40
5.35
0.40
«ՍՈԼԱՐ ՍԵԱՐ ԻՔՍ» ՍՊԸ
5.000 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղաբաշխում
ՀՀ, Մարզ Գեղարքունիք, համալնք Վարդենիս գյուղ Կանեվան 2 հողամաս
Անուն
Ստորագրություն
Ամսաթիվ
Մասշտաբ
Թերթ
Թերթեր
Նկի
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Նախագծեց
Վ. ՇՈԼԳԵԱՆ
Նախագծեց
Ս. ՊՈԼԳԻՎԱ
Հինարարական մաս
1:1000
05
10
Վահանակների տեղակալման չափադրական հատակագիծ
ecoVille
energy
Powered by Sun

Հավելված 6,

Օդային գծի կոորդինատները, ուղեգիծը

<<Սոլար Սթար Իքս>> արևային կայանի նախագծի 110կՎ ՕԳ-ի թվով 4 հենասյուների կոորդինատները հետևյալն են՝

1-ին հենարան – X=21250.9959, Y=1257.9379, X=21255.7730, Y=1275.4697, X=21250.5277, Y=1271.1608, X=21255.30048, Y=1270.6926:

2-րդ հենարան – X=21277.4497, Y=1101.8220, X=21280.2206, Y=1102.2248, X=21277.8524, Y=1099.0512, X=21280.6233, Y=1099.4539:

3-րդ հենարան – X=21307.8427, Y=906.1338, X=21310.6136, Y=906.5369, X=21308.2458, Y=903.3633, X= 21311.0163, Y=903.7661:

4-րդ հենարան – X=21333.3716, Y=719.5935, X=21338.9152, Y=720.3862, X=21334.1643, Y=714.0499, X= 21339.7079, Y=714.8426:



Հավելված 7.

Տարածքի հնագիտական և պատմամշակութային հուշարձանների վրա ազդեցության գնահատման եզրակացություն:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանեվան գյուղի վարչական սահմաններում «Մոլար Սթար Իքս» ՍՊԸ-ի կողմից արևային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված տարածքում ծրագրի իրականացման արդյունքում հնագիտական և պատմա-մշակութային հուշարձանների վրա հնարավոր ազդեցության գնահատական-եզրակացություն

Հայաստանը չափազանց հարուստ մշակութային ժառանգություն ունեցող երկիր է, որի անունները ձգվում են դեպի հազարամյակների խորքերը: Այստեղ հայտնի են շուրջ 33 000 պատմության և մշակույթի հուշարձաններ, ներկայացված 4500 առանձին համալիրներով, որոնք զբաղեցնում են մոտ 20 000 հեկտար ընդհանուր տարածք: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա հուշարձանները պաշտպանված են օրենքով և բաժանվում են տեղական և հանրապետական նշանակության: Դրանց մեջ հատկապես առանձնանում են թվով 80 համալիրներ, որոնք ունեն կարևորագույն պատմական, ճարտարապետական, գիտական, արվեստագիտական և մշակութային բացառիկ արժեք (ընդգրկում են մոտ 400 ճարտարապետական հուշարձաններ): Ոչ վաղ անցյալում դրանք ընդգրկված էին ԽՍՀՄ համամիութենական մշակութային և պատմական արժեք ներկայացնող հուշարձանների ցուցակում: Ներկայումս, ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակը, որը, սկսած 1963 թ. համալրվել է առավելքան 630 պատմական հուշարձաններով և բնության տարածքներով ամբողջ աշխարհում, ներառում է նաև Հայաստանի տարածքի որոշ հուշարձաններ: Դրանց շարքում են Հաղպատի վանական համալիրը, Սանահնի վանական համալիրը և միջնադարյան կամուրջը, Էջմիածինն իր բազմաթիվ հուշարձաններով, Զվարթնոցի տաճարը, Գեղարդավանքի համալիրը և Ազատ գետի վերին հատվածը: Հայաստանի տարածքի այլ հուշարձաններ ևս նախապատրաստվում են ընդգրկվելու ՅՈՒՆԵՍԿՈ-ի ցուցակներում, որոնք են՝ Նորավանքի վանական համալիրը, պարսկական Կապույտ մզկիթը և միջնադարյան Հայաստանի մարաքարաք Դվինը: Այդ պատճառով մշակութային ժառանգության գնահատումը և կառավարումը նման ծրագրերի իրականացման տարածքի համար գերակա խնդիր է և պահանջում է հնագետի փորձագիտական եզրակացություն: Հնագիտական փորձագիտության խնդիրներն են.

1. Բացահայտել ծրագրի իրականացման հնարավոր ազդեցությունները նյութական մշակույթի սկզբնաղբյուրների վրա, որոնք են շարժական և անշարժ հուշարձանները, հնավայրերը, կառուցվածքները և լանդշաֆտները, որոնք ունեն, հնագիտական, հնէաբանական, պատմական, ճարտարապետական, կրոնական, գեղագիտական կամ մշակութային նշանակություն:

2. Պատրաստել շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության հնագիտական բաղկացուցիչը՝ ներառյալ կառավարման պլանը (ԿՊ-ն), որոնք երկուսն էլ կնախապատրաստվեն ծրագիրը իրականացնող մարմնի (ԻՄ) աջակցությամբ, որն է «Մոլար Սթար Իքս» ՍՊԸ -ն:

3. Կազմակերպել նախնական և դաշտային հետազոտություններ նախագծի իրականացման տարածքում առկա հնագիտական հուշարձանների համար, տեղորոշել և բնորոշել հայտնի և նոր հայտնաբերված հնավայրերը, հանդես գալ որոշակի առաջարկներով՝ կապված հուշարձանների վրա ազդեցության մեղմացման միջոցառումների մշակման հետ, որոնք պետք է արտացոլվեն ՇՄԱԳ հաշվետվության մեջ և ԿՊ-ում: Ներկայացվող ՇՄԱԳ հաշվետվության մեջ ուսումնասիրված միավորները պետք է բաժանվեն երկու խմբի՝ հուշարձաններ, որոնք կրում են ծրագրի իրականացման անմիջական ազդեցությունը և հուշարձաններ, որոնք չեն ազդվում ուղղակիորեն կամ ազդվում են անուղղակիորեն: Բոլոր ազդվող հուշարձանների համար ծրագրի իրականացումից առաջ պետք է ներկայացվեն որոշակի եզրակացություններ, որոնք հնարավորություն կտան գնահատել նախագծի բացասական ազդեցությունը մշակութային միավորների և նրանց պատմա-աշխարհագրական միջավայրի վրա:

«Մոլար Սթար Իքս» ՍՊԸ-ի կողմից 5000 ԿՎտ հզորությամբ արևային էներգակայան հիմնելու համար նախատեսված 6.5 հա ընդհանուր մակերեսով տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանեվան գյուղի վարչական տարածքում (հողամասի կադաստրային կոդը 05-083-0103-0037)՝ համանուն բնակավայրից 850-900 մ հարավ, հարավ-արևմուտք, հարևան Լուսակունք գյուղի վարչական տարածքի սահմանագծին մոտ (**Քարտեզներ 1-1ա և 2-2ա**):

1. Բացահայտել ծրագրի իրականացման հնարավոր ազդեցությունները նրության մշակույթի սկզբնաղբյուրների վրա, որոնք են շարժական և անշարժ հուշարձանները, հնավայրերը, կառուցվածքները և լանդշաֆտները, որոնք ունեն, հնագիտական, հնէաբանական, պատմական, ճարտարապետական, կրոնական, գեղագիտական կամ մշակութային նշանակություն:

2. Պատրաստել շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության հնագիտական բաղկացուցիչը՝ ներառյալ կառավարման պլանը (ԿՊ-ն), որոնք երկուսն էլ կնախապատրաստվեն ծրագիրը իրականացնող մարմնի (ԻՄ) աջակցությամբ, որն է «Սոլար Սթար Իքս» ՍՊԸ-ն:

3. Կազմակերպել նախնական և դաշտային հետազոտություններ նախագծի իրականացման տարածքում առկա հնագիտական հուշարձանների համար, տեղորոշել և բնորոշել հայտնի և նոր հայտնաբերված հնավայրերը, հանդես գալ որոշակի առաջարկներով՝ կապված հուշարձանների վրա ազդեցության մեղմացման միջոցառումների մշակման հետ, որոնք պետք է արտացոլվեն ՇՄԱԳ հաշվետվության մեջ և ԿՊ-ում: Ներկայացվող ՇՄԱԳ հաշվետվության մեջ ուսումնասիրված միավորները պետք է բաժանվեն երկու խմբի՝ հուշարձաններ, որոնք կրում են ծրագրի իրականացման անմիջական ազդեցությունը և հուշարձաններ, որոնք չեն ազդվում ուղղակիորեն կամ ազդվում են անուղղակիորեն: Բոլոր ազդվող հուշարձանների համար ծրագրի իրականացումից առաջ պետք է ներկայացվեն որոշակի եզրակացություններ, որոնք հնարավորություն կտան գնահատել նախագծի բացասական ազդեցությունը մշակութային միավորների և նրանց պատմա-աշխարհագրական միջավայրի վրա:

«Սոլար Սթար Իքս» ՍՊԸ-ի կողմից 5000 ԿՎտ հզորությամբ արնային էներգակայան հիմնելու համար նախատեսված 6.5 հա ընդհանուր մակերեսով տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանեվան գյուղի վարչական տարածքում (հողամասի կադաստրային կոդը 05-083-0103-0037)՝ համանուն բնակավայրից 850-900 մ հարավ, հարավ-արևմուտք, հարևան Լուսակունք գյուղի վարչական տարածքի սահմանագծին մոտ (**Քարտեզներ 1-1ա և 2-2ա**):

հուշարձանի կարգավիճակ և պահպանվում է մինչև հուշարձանների պետական ցուցակում ընդգրկվելը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Նորահայտ հուշարձանը տնօրինող իրավաբանական կամ ֆիզիկական անձը պարտավոր է ապահովել դրա անվթարությունը, իսկ պետության կողմից այն վերցնելու դեպքում սեփականատիրոջ կրած վնասը փոխհատուցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով: Հուշարձանի հայտնաբերման փաստը թաքցնող, այն հաշվառելու և ուսումնասիրելու համար արգելքներ ստեղծող, ինչպես նաև գտածոները ոչնչացնող կամ յուրացնող անձը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սևանի ավազանում 1994-2000 թթ. հնագիտական ուսումնասիրություններ է իրականացրել հայ – իտալական համատեղ արշավախումբը, որի արդյունքում արձանագրվել են մեծ քանակի բրոնզ-երկաթիդարյան և ավելի ուշ հնագիտական դարաշրջաններին վերաբերող նյութեր և հնավայրեր, սակայն ուսումնասիրվող տարածքի հետ առնչվող որևէ փաստագրում առկա չէ (տե՛ս Biscione et al. Eds. 2002): Տեղում իրականացված հնագիտական որևէ ուսումնասիրության մասին տեղեկատվություն չի հաջողվել գտնել նաև հրատարակություններում և հաշվետվություններում (տե՛ս Միքաելյան Գ.Հ., 1968):

Եվ վերջապես, ս.թ. մարտի 14-ին իրականացվել է տարածքի դաշտային-հնագիտական հետազոտություն: Տեղանքի հնագիտական ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ այն ժամանակին ենթարկվել է մելիորացիայի, հարթեցվել, տեղում իրականացվել է քարհավաք և երկար տարիներ այն օգտագործվել է գյուղատնտեսական նպատակներով (որպես վարելահող): Ուստի, եթե այստեղ հնագիտական հուշարձաններ անգամ եղել են, ապա արտաքին նշաններ չեն պահպանվել (**Լուսանկարներ 1-6**): Հետազոտության արդյունքում պատմա-մշակութային որևէ միավոր կամ դրանց հետքեր, հնագիտական նյութեր չեն փաստագրվել:

Ամփոփելով ներկայացված տեղեկատվությունը կարող ենք նշել, որ Վարդենիս համայնքի Վանեվան գյուղի վարչական սահմաններում «Սոլար Սթար Իքս» ՍՊԸ-ի

կողմից արևային էներգակայան հիմնելու համար նախատեսված, ընդհանուրը՝ 6.5 հա մակերեսով տարածքը պատմա-մշակութային միավորների վրա հնարավոր բացասական ազդեցության տեսանկյունից ռիսկեր չունի, քանի որ պատեղ պատմա-մշակութային միավորներ չեն փաստագրվել:

Հայկ Հայդոսյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Ինստիտուտ, Վաղ Հնագիտության բաժնի Կրտսեր գիտաշխատող

Բորիս Գասպարյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Ինստիտուտ, Վաղ Հնագիտության բաժնի Գիտաշխատող

Դմիտրի Առաքելյան
ՀՀ ԳԱԱ Երկրաբանության ինստիտուտ
Գիտաշխատող

20.03.2025 թ.

Օգտագործված գրականության ցանկ

1. Պետական ցուցակ Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների՝ Գեղարքունիքի մարզ, Հավելված ՀՀ կառավարության 2002 թ., Հունվարի 9-ի, N80-Ն որոշման,

2. Միքաելյան Գ.Հ., 1968, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները» I, Պրակ I, Բրոնզեդարյան հուշարձաններ, Պրակի խմբագիր՝ Հ.Ա. Սարգսիդոսյան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1968;

3. Геология Армянской ССР, т. I, Геоморфология, Ответственный редактор Н.В. Думитрашко, Издательство Академии Наук Армянской ССР, Ереван, 1962;

4. Геология Армянской ССР, т. II, Стратиграфия, Ответственный редактор К.Н. Паффенгольц, Издательство Академии Наук Армянской ССР, Ереван, 1964;

5. Biscione R., Hamayakyan S., Parmegiani N., (Eds.), With contributions by R. Biscione, A. Gevorkyan, H. Hakobyan, S. Hmayakyan N. Parmegiani, M. Poscolieri, M. Salvini, H. Sanamyan, Y.V. Sayadyan, G. Tumanyan, N. Yengibaryan, The North-Eastern Frontier, Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin, I. The Southern Shores, CNR, Istituto Di Studi Sulle Civiltà Dell'EgeoE Del Vicino Oriente, Roma, 2002, ISBN 88-87345-06-6, 470 pp.

Քարտեզ 2



Վարդենիս համայնքի Վանեվան գյուղի վարչական սահմաններում գտնվող «Մոլար Սթար Էքս» ՍՊԸ-ի կողմից արևային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված 6.5 հա ընդհանուր մակերեսով տարածքը

Քարտեզ 2ա

Վարդենիս համայնքի Վանեվան գյուղի վարչական սահմաններում գտնվող «Մոլար Սթար Էքս» ՍՊԸ-ի կողմից արևային էներգակայանի կառուցման աշխատանքների համար նախատեսված 6.5 հա ընդհանուր մակերեսով տարածքը

Լուսանկար 3. «Մոլար Սթար Իջս» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Վանեվան գյուղի վարչական սահմաններում արհային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի հյուսիս-արևելյան հատվածը

Լուսանկար 4. «Մոլար Սթար Իջս» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Վանեվան գյուղի վարչական սահմաններում արհային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի կենտրոնական հատվածը

12

Լուսանկար 5. «Մոլար Սթար Իջս» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Վանեվան գյուղի վարչական սահմաններում արհային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի արևմտյան հատվածը

Լուսանկար 6. «Մոլար Սթար Իջս» ՍՊԸ-ի կողմից Վարդենիս համայնքի Վանեվան գյուղի վարչական սահմաններում արհային կայան կառուցելու համար նախատեսված տարածքի հարավային հատվածը

13

Հավելված 8.

Մթնոլորտային օդի հաշվարկներ

Հողային աշխատանքներ

Հողային աշխատանքների ժամանակ առաջանում են փոշու արտանետումներ: Դրանք առաջանում են փորման-բեռնման աշխատանքների արդյունքում՝ հիմնականում հորատող, հարթեցնող և ինքնաթափ մեքենաների: Հողային աշխատանքները իրականացվում՝

4 ամիս x 26 օր/ամիս x 8 ժամ/օր = 832 ժամ:

Հաշվարկները կատարված են համաձայն "ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ", Минпромстрой СССР, 1987 մեթոդակարգի հետևյալ բանաձևի.

$Q_{Ф.Բ.}$= (P1 x P2 x P3 x P4 x P5 x G x P6 x B) x 10^6/3600 տ/ժամ, որտեղ (նշված մեթոդակարգի աղյուսակ 1)։

P1 – փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, ընդունվում է 0.05

P2 – 0-50 մ/կմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.0,

P4- գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.4[1]

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

G – հանվող հողային զանգվածը:

Արևային կայանի շինարարության ժամանակ հանվող հողի ծավալը կկազմի՝ 299, $մ^3$, հաշվի առնելով հողային զանգվածների միջին տեսակարար կշիռը՝ 493,35տ:

Ժամում հանվող տեղափոխվող գրունտի քանակը կկազմի՝

493,35տ : 533 ժամ/շին. ժամանակամիջոց = 0,9 տ/ժամ.:

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի թափման բարձրությունը, 0.6

$Q_{Ф.Բ.}$ = 0.05 x 0.02 x 1.0 x 0.4 x 0.5 x 0,9 x 1.0 x 0.6 x 10^6/3600 = 0.03գ/վրկ, կամ՝

0,03 x 3600 x 533 : 10^6 = 0,057տ/շին. ժամանակամիջոց:

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործում

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում արտանետումները առաջանում են վառելիքի այրման արդյունքում: Հիմնականում օգտագործվում է դիզելային վառելիք:

Դիզ. վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակված "Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման" մեթոդական հրահանգի[2]

---

[2]Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը "Core Inventory

հիման վրա:
Հաշվարկը իրականացվում է ըստ ծախսվող վառելիքի քանակի, տվյալ դեպքում դա ներկայացվում է դիզելային վառելիքով:
Ըստ նշված մեթոդակարգի, ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև:
Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO2	CH	ՅՕՄ	CO	N2O	CO23	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Շինարարության ընթացքում շահագործվելու են հորատող, հարթեցնող, ինքնաթափ մեքենաներ: Շինարարական տեխնիկան աշխատելու է շինարարության ընթացքում մոտ 5 ամիս (130 օր, 1040 ժամ):
Հաշվի առնելով ստույգ նախագծային տվյալների բացակայությունը, հաշվարկների համար օգտագործվել են փորձագիտական գնահատականների հիման վրա ընդունված ցուցանիշները, ըստ որոնց դիզվառելիքի քանակները հետևյալն են ընդունվել.
- շինարարական տեխնիկա՝ 0.08 տ/օր, ընդամենը՝ 0.08 տ/օր x 130 օր = 10,4 տ;
Ընդամենը՝ 10,4 տ:
Արտանետումների հաշվարկները ըստ շահագործվող տեխնիկայի տեսակի բերված են աղյուսակ 2-ում:
Ծծմբային անհիդրիդ
Ծծմբային անհիդրիդի (SO_2) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO_2-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.
ESO2 = 2Σksb, որտեղ՝
ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ
b –ն վառելիքի ծախսն է՝ 10,4 տ/շինժամ
SO_2 = 2 x 10,4 x 0.002 = 0,0416 տ/ շին. ժամ կամ 0.011 գ/վրկ:

Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները,	Արտանետումները

of Emissions in Europe" (այսուհետ՝ CORINAIR)՝ "Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում "մեթոդոլոգիային համապատասխան"
[3] Ածխածնի երկօքսիդը, ըստ ՀՀ օրենսդրության, չի հանդիսանում վնասակար նյութ և ենթակա չէ նորմավորման, համապատասխանաբար հետագա հաշվարկներում հաշվի չի առվնել:

	գ/կգ	գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /1040ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	0.1	0,374
CH (ածխաջրածիններ)	0,243	0.00067	0.0025
NOx (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.3	0.11	0,411
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.0119	0,044
Ծծմբային անհիդրիդ		0,011	0,0416
Անկազմակերպ փոշու արտանետում		0,03	0,057

Հավելված 9

Գործունեության ենթակա տրածքի հողի անալիզի արդյունքները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ARMENIAN NATIONAL AGRARIAN UNIVERSITY

FOUNDATION

ՀՀ, Երևան, 0009, Տերյան 74
Հեռ.՝ (+374 10) 58 19 12
Էլ. փոստ՝ info@anau.am
www.anau.am

74 Teryan Str., 0009, Yerevan, RA
Tel: (+374 10) 58 19 12
E-mail: info@anau.am
www.anau.am

«11» 06 2025 թ. № 46-Բ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՈՂԱՆՄՈՒՇԻ ԱՆԱԼԻԶԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նմուշի անվանումը	Մեխանիկական կազմ	Հումուս %	pH	Ջրալույծ աղերի պարունակությունը %	Պարունակությունը ջրային քաշվածքում մգ/էկվ 100գ հողում		Բույսերին մատչելի սննդատարրերի պարունակությունը, մգ 100գ հողում		
					Ca	Mg	N	P_2O_5	K_2O
Հող 0-40 սմ.	Կավավազային միջակ	3,75	7,3	0,039	1,10	0,33	3,19	2,00	29,07
Օրինակելի քանակներ	Կավավազային թեթև	-	6,5-7,5	0,05-0,2	Ca 3/ Mg1		6-8	6-8	50-60

Եզրակացություն՝ Հետազոտվող հողանմուշի միջավայրի ռեակցիան թույլ թթվային է, ջրալույծ աղերի պարունակությունը գտնվում է բույսերի համար թույլատրելի, նպաստավոր սահմաններում: Բույսերին մատչելի սննդատարրերի (NPK) պարունակությամբ՝ ազոտով, ֆոսֆորով և կալիումով միջակ է ապահովված :

Իրականացնող՝ ՀԱԱՀ Օրգանական գյուղատնտեսության լաբորատորիա
Հասցե՝ ք.Երևան Տերյան 74, ք. Երևան
Հեռ: (+37412) 58 00 65
E-mail: busabutsutyun-hoxagitutyun@ma

Բուսաբուծության և հողագիտության ամբիոնի վարիչ՝ Գ.Ա Թովմասյան

Ընդհանուր բաժին
Общий отдел
General department

Հավելված 9.

Վարդենիս համայնքի ավագանու որոշումը

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

29/05/2025թ. ՆԻՍՏԻ ԹԻՎ 6 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 75-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 5 ՄՎՏ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի և 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանևան բնակավայրում «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցելու վերաբերյալ 2025 թվականի մայիսի 22-ին կայացած հանրային լսման արձանագրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ նախնական համաձայնություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանևան բնակավայրում «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման նպատակով նախատեսվող գործունեության իրականացմանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -21 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Իսկականի հետ ճիշտ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031
vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2025 թվականի N 75-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 5 ՄՎՏ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի և 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանևան բնակավայրում «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցելու վերաբերյալ 2025 թվականի մայիսի 22-ին կայացած հանրային լսման արձանագրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Տալ նախնական համաձայնություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանևան բնակավայրում «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման նպատակով նախատեսվող գործունեության իրականացմանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -21 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՈՒՍՅԱԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԲԱՋՈՅԱՆ ՀԱՍԼԵՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

ԵՓՐԵՄՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

ՂԱՐԻԲՅԱՆ ՆԻՆԱ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՇԱԲՈՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԴԱՎԻԹ

ՇՀՈՅԱՆ ՋԱՎԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՋԵՄԱՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԿԱՄՈ ՋԱՐՈՅԱՆ

Հավելված 10.

Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ, Լսման լուսանկարներ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանևան բնակավայրի վարչական ղեկավարման շենքում կայացած՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանևան բնակավայրում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների

2025թ-ի մարտի 22-ին, ժամը 11:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանևան բնակավայրի վարչական ղեկավարման շենքում տեղի ունեցավ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանևան բնակավայրում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի նախագծի և նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել <<Առավոտ>> օրաթերթի՝ 2025թ-ի ապրիլի 16-ի հերթական համարում:

Հանրային քննարկմանը մասնակցում էին՝ Վանևան բնակավայրի բնակիչները, Վարդենիս համայնքի ղեկավարի խորհրդական՝ Խաժակն Մկրտչյանը, Վանևան բնակավայրի վարչական ղեկավար՝ Իգոր Հարությունյանը, <<ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ>> ՍՊ ընկերության տնօրեն Հարություն Ավագյանը, <<Նովալ>> ՍՊԸ ներկայացուցիչ՝ Թամարա Նուրիջանյանը:

Վարդենիս համայնքի ղեկավարի խորհրդական Խաժակն Մկրտչյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև խոսքը փոխանցեց <<Նովալ>> ՍՊԸ ներկայացուցիչ՝ Թամարա Նուրիջանյանին:

Թամարա Նուրիջանյանը ողջունեց մասնակիցներին և տեղեկացրեց, որ քննարկվող նախագիծը՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն ենթակա է փորձաքննության, որի համար նախատեսվում է՝ 2 հանրային լսում:

<<Նովալ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Թամարա Նուրիջանյանը քննարկման մասնակիցներին տեղեկացրեց, որ նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանը կառուցվելու է Վանևան բնակավայրի տարածքում և զբաղեցնելու է 6,5հա(հեկտար) մակերես, այդ հատվածում է կառուցվելու նաև ֆոտովոլտային էլեկտրակայանի ենթակայանը:

Թամարա Նուրիջանյանը տեղեկացրեց նաև, որ շրջակա միջավայրի վրա, որոշակի նվազ ազդեցություն կարող է առաջանալ էլեկտրակայանի շինարարության ընթացքում կապված հողային աշխատանքների հետևանքով օդային ավազան արտանետումների հետ, բայց ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված են միջոցառումներ օդային ավազան արտանետումների նվազեցման հետ կապված:

Նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեխնիկական բնութագրերի մասին Վանևան բնակավայրի ազգաբնակչությանը ավելի մանրամասն տեղեկացրեց <<ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ>>ՍՊ ընկերության տնօրեն՝ Հարություն Ավագյանը՝ նշելով, որ 6,5հա (հեկտար) մակերեսի վրա կառուցվող էլեկտրակայանը ունենալու է՝ 5ՄՎտ հզորություն, արևային կայանի տարածքում կառուցվելու է՝ 7000 Կվա հզորության տրանսֆորմատորային տնտեսություն:

<<ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ>> ՍՊ ընկերության տնօրեն՝ Հարություն Ավագյանը տեղեկացրեց նաև, որ բուն շինարարական աշխատանքները տևելու է մոտավորապես մեկ տարի, իսկ շինարարաության ընթացքում բացվելու է մոտավորապես՝ 80-100 աշխատատեղ, իսկ արևային կայանի շահագործման ընթացքում անհրաժեշտ է լինելու՝ շահագործման և պահպանման համար հիմնական՝ թվով հինգ աշխատակից:

Քննարկմանը մասնակից՝ վանևան բնակավայրի բնակիչները իրենց հուզող հարցերը ուղղեցին՝ <<ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ>>ՍՊ ընկերության տնօրեն՝ Հարություն Ավագյանին.

Հարց.՝

- Որ բնակավայրից են լինելու շահագործվող էլեկտրակայանի աշխատողները:

Պատասխան.՝

- Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի շահագործման դեպքում առաջնահերթություն կտրվի Վանևան բնակավայրի բնակիչներին:

Քննարկմանը մասնակից բնակիչները ողջունեցին նախաձեռնությունը:

Բնակիչների կողմից առարկություններ չհնչեցին և Խաժակ Մկրտչյանը ավարտեց քննարկումը:

Քննարկումների վարող և պատասխանատու՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի խորհրդական — Խ. Մկրտչյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝

<<ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ>> ՍՊԸ տնօրեն — Հ. Ավագյան

Մասնակիցների ցանկ

«Սոլար Սթար Իքս» ՍՊԸ-ի կողմից Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի գ. Վանևան 2 հողամասում արևային ֆոտոովոլտային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկում: 22.05.2025թ.

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Տեղեկատվություն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	3388-90-45	
2.	[illegible]	[illegible]	093-08-73-00	
3.	[illegible]	[illegible]	077-654-650	
4.	[illegible]	[illegible]	098-97-80-20	
5.	[illegible]	[illegible]	093-65-51-19	
6.	[illegible]	[illegible]	–	
7.	[illegible]	[illegible]	093-13-10-08	
8.	[illegible]	[illegible]	077-18-12-42	
9.	[illegible]	[illegible]	093-230-340	
10.	[illegible]	[illegible]	094823176	
11.	[illegible]	[illegible]	093-34-34-16	
12.	[illegible]	[illegible]	094-87-83-88	
13.	[illegible]	[illegible]	077 785902	
14.	[illegible]	[illegible]		
15.	[illegible]	[illegible]	098556561	
16.	[illegible]	[illegible]	093831513	
17.				
18.				
19.				
20				
21				

Հավելված 12.

Առավոտ թերթի հայտարարությունը



Առավոտ

օրաթերթ

հրատարակվում է 1994 թ.

գինը՝ 200 դրամ

063/7291/ 16 ապրիլ 2025 շաբաթ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» 2023թզ ՀՀ օրենքով ինչպես եւ ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 28-ի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ 2025 թ Մայիսի 22-ին՝ ժամը 11:00-ին, Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանեւան բնակավայրի վարչական դեկավարման շենքում (ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վանեւան գ, Գարագաշի փող., 28 շենք) տեղի կունենա հանրային 1-ին քննարկում՝ կատված «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻԲԱ» ՍՊԸ կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանեւան բնակավայրի 2 հողամաս հասցեում նախատեսվող 5 ՄՎտ հզորությամբ արեւային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ: Դիտողությունների եւ առաջարկությունների համար դիմել Վարդենիսի համայնքապետարան, կամ vardenis.gegharquniq@mta.gov.am Հեռ. (0269)22031:

Հավելված 13.
Պետական տուրքի վճարման անդորրագիր


PAYMENT ORDER RECEIPT
Ամերիաբանկ ՓԲԸ Քոլար Մասնաճյուղ
Ameriabank CJSC Kochar Branch
Գնագիր\Date 13/06/25 14:08
Հաշիվ\Debit 1570062148351400
Գրիչ\Credit 900005000196
Գումար\Amount AMD 300,000.00
Հաշիվ\Remitter
«ՍՈԼԱՐ ՍՏԱՐ ՍՊԱ» ՍՊԸ
SOLAR STAR X LLC
Հաշիվի բանկ\Remitter's Bank
Ամերիաբանկ
AMERIABANK CJSC
Հարկի հաշիվ\Remitter's Tax Code 8104455045
Հաշիվ\Beneficiary
Հաշիվ միջոցների վրա ազդեցության ֆորմաֆենոլյուն, 4% շրջակա միջոցների նախարարությունն
Հաշիվի բանկ\Beneficiary's Bank
Գանձապետական բաժանմունք
Treasure division
Գումարը բառերով\Amount in Words
Երեք հարյուր հազար դրամ
Նպատակ\Details
«ՍՈԼԱՐ ՍՏԱՐ ՍՊԱ» ՍՊԸ Հայտնիկիս հաշվեկի, Գանձվան բնակ. տրանսպ
ֆոտոլիլ ապրին կայանի, Շրջակա միջ. նախ. շրջ. միջ. վրա ազդ
ֆորմաֆենոլյուն համ.
Հաշիվ որ\Value Date 16/06/25
Գանձումը\Commission 1570062148351400
Գանձման գումարը բառերով\Commission in Words
Հինգ հարյուր դրամ
Հաշիվ\Maker Լիլիա Կարապետյան
Գ.Տ.
ST.
ՀԱՅԱՍՏԱՆ 02502212
«Ամերիաբանկ» ՓԲԸ
«Քոլար» մ/ա
Ընդունվաց է
13 JUN 2025
ACCEPTED
«Ameriabank» CJSC
«Kochar» branch
KCH.OD 8